

10.000/5

11

11
11

ЗВЕДЫ
\$ - 22

24 SEP 2009

Պրոլետարներ քուրօ յերկիցների, միացե՛ք

ՅԿԸՄ

Ֆ-22


ՑԱՅՆՔԵՐԴ

ար.

ՀԱՅԼԿՑԵՄ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

10/01/4
40268

542



5 SEP 2013

10.000/5

Հնկերնե՛ր :

ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՅԵՐԻ ԽՍԹԻ ՊՈւթյան նոր ծրագրի քննարկումն ու ընդունումը մեծ դեպք է մեր միության կանքում։ Առանց չափազանցելու կարելի յե ասել, վոր համեմատելու նոր ծրագրի անհրաժեշտությունը վաղուց ե արդեն հասունացել։

ԽՍՀՄԻ ՑԵ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՄԼԿՅԵՄ ՆՈՐ ԾԲԱԳԻՐԸ

Կոմյերի խոմի պությունն իր գոյության առաջին իսկ որերից իր ամբողջ գործունեյության հիմքում զրեց կոմունիստական սկզբունքներ, վորոնք վորոշեցին նրանք բնություն իրեւ յերիտասարդության կոմունիստական կազմակերպության։ Այս հանդամանքն իր արտահայտությունը գտավ ՈԿՅԵՄ ծրագրի հիմնական թերմիներում, վորոնք ընդունվեցին կոմյերի խոմի պության Համառումառանյան I համագումարում, 1918 թ.։

Այս թեղիներում ասված է.

«Միությունը համերաշխ է մուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության հետ։ Միությունը նպատակ է դնում իրեն տա-

ФАЙНБЕРГ
О ПРОГРАММЕ ВЛКСМ
Армпартиздат, Ереван

բածել կոմունիզմի գաղափարները և բանվոր ու գյուղացի յերիտասարդությանը ներդրավել Խորհրդային Ռուսաստանի ակտիվ շինարարության մեջ» :

Կոմյերիտմիության մեջ յերբեք հարց չի բարձրացվել փոփոխելու մեր Միության գործունեության բովանդակությունը վորոշող այս հիմնական սկզբունքը : Փոփոխվել են և փոփոխվում են կոմյերիտմիության աշխատանքի ձեւերն ու մեթոդները : Սոցիալիստական շինարարության ամեն մի ետապում կոմյերիտմիության առջև հարուցվել են նոր խնդիրներ : Բայց Միության հիմնական խնդիրը—աճնային պայքար կոմունիզմի գործի համար և աճող սերնդի դաստիարակություն այս վողով—յերբեք չի փոփոխել :

Կոմյերիտմիության լիբրե կոմունիստական կազմակերպության ընույթի հարցը լուծվել և դեռևս միության կազմակերպման սկզբում, և այս մտքով մեր ծրագրի հիմնական սկզբունքները մնում ենին և մնում են անփոփոխ :

Կոմյերիտմիության հին ծրագրի փոփոխության անհրաժեշտությունն ավելի պարզ պատկերացնելու համար հարկավոր և դիմել այն դրությանը, վորի մեջ ընդունվել և ծրագրը :

Մեր հին ծրագրն ընդունված և ԱԿՅԵՄ Համառուսաստանյան IV համագումարում, 1921թ. հոկտեմբերին : Սա այն ժամանակ էր, յերբ նոր անտեսական քաղաքականությունն ընդամենը կես տարվա գոյություն ուներ : Յերկրի ժողովրդական անտեսու-

թյունը դեռևս չեր կազմուրվել խմակերիալիստական և քաղաքացիական պատերազմների տարիներին առաջացած քայլացման հետևանքներից : Յերկրի անտեսակարգը բնորոշվում էր մեծ խայտարղետությամբ : Սոցիալիստական ձեռնարկությունները չըջապատված ենին դյուղացիական մանր անհատական տնտեսությունների մի ամբողջ ծովով : Գոյություն ունեյին և, առևտորի աշխատացման հետևանքով, վորոշ չափով աճում եյին մասնավոր կապիտալիստական տարրերը . կուլակները գյուղում, մասնավոր ձեռնարկությունները՝ քաղաքում :

Լենինյան «ո՞վ ում» հարցը, վոր կատարյալ վրձուականությամբ դրված եր զարգացման ամբողջ ընթացքով, մի հարց եր այն մասին, թե ո՞վ կհաղթի—ժողովրդական տնտեսության սոցիալիստական տարրերը, թե՝ կապիտալիստական :

Նոր անտեսական քաղաքականությունը հնարավորությունը տվեց կուսակցությանն ու խորհրդային իշխանությանը ձեռնարկելու ժողովրդական տնտեսության բարձրացմանը, ամբացնելու բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը և հետագայում հարձակում ծավալելու կապիտալիստական տարրերի վրա :

Նեպի առաջին տարիները մեծ դժվարությունների տարիներ եյին : Զնայած խորհրդային կառավարության և կոմունիստական կուսակցության բոլոր ջանքերին, և նա ժամանակ բանվոր յերիտասարդության, ինչպես և բոլոր աշխատավորների տնտեսական դրու-

թյունը դժվարին եր պատերազմի պատճառած մեծ ավերումների հետևանքով։ Ուստի այն ժամանակ այնպիսի հարցեր, ինչպես բանվոր յերիտասարդության տնտեսական շահերի պաշտպանությունը, ինչպես անչափահաների աշխատանքի սոցիալիտական կաղմակերպման համար պայքարելը ամենից կենսական և հրատապ հարցերն ելին։ Այս դրությունը, այն ժամանակվա ողայմաններն անդրադարձան IV համագումարում ընդունված՝ կոմիտեի միության ծրագրում։ Այն ժամանակից Միության ծրադիրը չի փոխվել, թե՛ւ 15 տարի յե անցել արդեն և այդպիսի պահանջը վաղուց հասունացել ե։

Այժմ մենք ապրում ենք այնպիսի եսլուսայում, յերբ տնտեսական ձևերի նախկին խայտարկետությունը չկա այլևս, յերբ «սոցիալիտական» տնտեսաձևն անբաժան կերպով տիրող և միակ հրամայող ուժն և ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ» (Ստալին, Լենինիզմի հարցեր, եջ 555)։ Մեր յերկիրը դարձել է հզոր, ծաղկող պետություն՝ առաջավոր ինդուստրիայով և խոշոր կոլեկտիվ գյուղատնտեսությամբ։ Իրականացված և մեծ Լենինի պատվամը՝ «նեպական Ռուսաստանը կդառնա սոցիալիտական Ռուսաստան»։

Սոցիալիզմը մեր յերկրում հաղթել և վերջնականապես և անդառնալիքըն։ Նեպական Ռուսաստանը դարձել է սոցիալիտական Ռուսաստան։ ԽՍՀՄ ամբողջ ժողովրդական տնտեսությունը դարձել է սուբյակտիվ պարտականությունը և պահպանական հաջող շինարարությունը, կարգի դնի հաշվառումն ու վերահսկողությունը մասնավոր

հնդկամյակի հիմնարկան խնդիրը՝ կապիտալիստական տարրերի և առհասարակ դասակարգերի վերացումը։ Մենք ապրում և աշխատում ենք սոցիալիտական անդասակարգ հասարակության կառուցման պայմաններում, և արդեն պայմանները նախապատրժաստվում են անդասակարգ հասարակության առաջին աստիճանից՝ սոցիալիզմից լիակատար կոմունիզմին անցնելու համար։

Պետք է ուղղակի առել, վոր Լենինյան կոմիտեիստմիությունը վաղուց արդեն չի ապրում իր հին ծրադրով, վորովհետեւ կյանքը շատ առաջ և գնացել ծրադրով և նա խիստ հնացել ե։

Յես ինձ թույլ կտամ մեջ բերելու մի քանի որինակ, վորոնք ցույց են տալիս, թե վորքան հնացել է Ռիօթե՛Մ IV համագումարում ընդունված՝ Միության ծրագիրը։ 1921թ. ընդունված Միության նախկին ծրագրում ասված եր.

«Ռուսաստանի խորհրդային իշխանության հիմնական խնդիրն ե Խորհրդային հանրապետության պետական ապարատի կառուցումը, ամերացումն ու կատարելագործումը և սոցիալիտական տնտեսության կառուցումը։ Ռուսաստանի պրոլետարիատը, վորոշակի ըրջանակներում թույլ տալով՝ մասնավոր կապիտալիստական տնտեսությունների զարգացումը, պետք է առաջին հերթին ապահովի խոշոր արդյունաբերության հաջող շինարարությունը, կարգի դնի հաշվառումն ու վերահսկողությունը մասնավոր

ձեռնարկությունների նկատմամբ և բոլոր ուժեղով աջակցի դյուզատնության բարձրացմանն ու բարելավմանը»:

Այս խնդիրները լրիվ և ամբողջությամբ վերաբերում են անցյալին: Սոցիալիստական տնտեսությունը արդեն կառուցված է մեր յերկրում: Կապիտալիստական տարրերն ամբողջումն վերացված են: Բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ստեղծել և սոցիալիստական խոշոր արդյունաբերություն: Յերկրի խնդուստրացման հաջող իրականացումը հնարավորություն տվեց վոչ միայն բարձրացնելու և բարելավելու գյուղատնտեսությունը, ինչպես գրված եր հին ծրագրում, այլև արմատապես վերակառուցելու այն, գյուղացիական տընտեսությունների մասսան փոխադրելու սոցիալիստական ճանապարհի վրա:

Յեզ կամ, որինակ, կոմյերիսմիության նախկին ծրագրում ասված եր.

«Մինչև այն ժամանակ, քանի դեռ Ռուսաստանի ժողովրդական տնտեսության մեջ ուժեղ կլինեն մասնալոր կապիտալիստական տարրերը, ՌԿՅԵՄ առջև խնդիր գրված կլինի պայքարել մասնավոր կապիտալի և մանր տնտեսատերերի, արհեստավորների ու տնայնագործների դեմ՝ պաշտպանելու և հսկելու համար անչափահաների աշխատանքը»:

Պարզ ե, վոր այժմ ծրագրի այս կետն եւ կարելի

յե համարել մոռացության տրված, քանի վոր կապիտալիստական տարրերը վերացված են և այլևս չկամեկը, վորի հանդեպ պաշտպանվեն աշխատավոր յերկուարդության շահերը:

Գետական շինարարության մեջ յերիտասարդության մասնակցելու մասին նախկին ծրագրում ասված եր.

«Բնարական տարիքային ցենզն իշխնելով մինչև 18 տարեկան հասակը, Խորհրդային սահմանադրությունը, ինչպես և վոչ մի բուրժուական դեմոկրատական սահմանադրություն աշխարհում, լիովին ազահովում և յերիտասարդ բանվորների ու գյուղացիների բոլոր քաղաքացիական իրավունքները, նրանց դարձնում և պրոլետարեական սկետության իրավադոր քաղաքացիների: Պրոլետարական յերիտասարդության և նրա կաղմակերպության՝ ՌԿՅԵՄ-ի խնդիրը հանդիսանում և բոլոր յերիտասարդ բանվորների ու գյուղացիների կողմից իրենց իրավունքների լիակատար ողտադրման իրականացումը...»:

Նախկին ծրագրի այս կետն եւ խիստ հնացել ե, քանի վոր խորհրդային ախտամելի՝ յերիտասարդությանը տրամադրած ընտրական իրավունքները նու կիովին ողտադրում ե: Սա յերեւում ե թեկուզ խորհուրդների վերջին ընտրությունների տվյալներից, վորոնք վկայում են կոմյերիտականների և ամբողջ աշխատավոր յերիտասարդության ակտիվ մասնակցու-

թյան մասին Առողջրդային պետության կառավարման
գործում :

Այս որբնակները բավական պարզորոշ վկայում են,
վոր ՌԿՅԵՄ IV համագումարի ընդունած՝ Միության
ծրագիրը խիստ հնացել է :

Բացի սրանից, կոմյերիտմիության հին ծրագիրը
պարունակում է խորապես ախալ, հակալենինյան այն
պնդումը, թե Ռուսաստանը «կարող է համեմ սոցիա-
լիզմին համաշխարհային պրոլետարական հեղափո-
խության միջոցով միայն» :

Ծրագրի այս կետը արմատապես սխալ է : Նրանում
արտահայտություն են դաել տրոցկիստական հայցք-
ները և կոմյերիտմիության ծրագրի այն ժամանակ-
վա կաղմողներ Շատկինի և ուրիշ անձանց տրամա-
դրությունները, վորոնք հետապայում ուղղվեցիայի
մեջ ելին կուսակցության հանդեպ և նրանցից միքա-
մակը լիովին անցան կուսակցության թշնամիների բա-
նակը : Այս մարդկի վորձում ելին սխալ կողմնորոշել
նակը : Եյս մարդկի վորձում ելին սխալ կողմնորոշել
նակը յերիտասարդությանը, բայց, ինչպես ձեզ հայտ-
նի յե, նրանք պարտություն կրեցին : Թեև նրանց հա-
ջողվել ե այս նողկալի տեսությունը ներս խցկել կոմ-
յերիտմիության ծրագրի մեջ, բայց հայտնի յե բոլո-
յերիտմիության ծրագրի մեջ, աշխատանքում և հականե-
րին, վոր իրենց պրակտիկ աշխատանքում մղած
զավոխարական տրոցկիդմի դեմ հետադայում մղած
զավոխարական պայքարում մեր բանլորա-դյուուլացիա-
դականիարային պայքարում մեր բանլորա-դյուուլացիա-
դական յերիտասարդությունն ու կենինյան կոմյերիտ-
ական յերիտասարդությունն ու կենինյան կոմյերիտ-

հնարապության լենինյան-ստալինյան ուժումունքին :

Այս թե ինչու յէ մեզ հարկավոր չամկցելու ներ-
կա համագումարում քննարկել և ընդունել Միության
նոր ծրագիրը :

Մեր նոր ծրագիրը վոչ միայն ըստ եյության, այլև
իր կառուցվածքով արմատապես տարբերվում է Յե-
րիտասարդության Կոմյունիստական ինտերնացիոնալի
մյուս սեկցիաների ծրագրերից : Նրանք, այս սեկցիա-
ները, մշտական պայքարի մեջ գտնվելով բուրժուական
կառավարությունների դեմ, պրոլետարական հեղափո-
խության հաղթության համար, պետք ե իրենց ծրա-
գրերում շարադրեն այս պայքարի տակտիկան և քա-
ղաքական ու տնտեսական վորոշակի պահանջներ առա-
ջադրեն, աշխատավոր յերիտասարդության անումնից :
յերիտասարդությանը համախմբելով այս պահանջների
շուրջը և նրան մորիլուղացիայի յենթարկելով բուր-
ժուագիայի դեմ պայքարելու համար :

Ուրիշ բան և մեր ծրագիրը : Զարգացնելով իր
գրույթները Միության խնդիրների մասին, նա յել-
ուում ե ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակից, այն բա-
նից, վոր իսորհրդային իշխանությունը ներկայացնում
ե աշխատավոր ժողովրդի ամենալայն մասնաների
շահերը : Խորհրդային իշխանությունն զգայուն ու
հոգատար վերաբերմունք ե ցույց տալիս յերիտա-
սարդ սերնդին, պաշտպանում է նրա աշխատանքներ ու
առողջությունը : Մեր յերկրում չկան միմյանց հա-
կաղիր դատակարդեր, այնպես, ինչպես չկա շահագոր-
ծում, վորից պետք ե պաշտպանել աշխատավոր յերի-

տասարդությանը։ Ուստի մենք ամենակին հարկ չենք զգում պայքար մղելու յերիտասարդության շահերի պաշտպանության համար և մեր ծրագրում վորեն պահանջ առաջադրելու նրան իրավունքների ու շահերի պաշտպանության վերաբերյալ։

Այս պատճառով մեր ծրագիրը միանդամայն ուրիշ բնույթ և կրում ։ նա պետք է նշի կոմյերիտական-ների ու յերիտասարդության պարտավորությունները Խորհրդային պետության ամրացման գործում ։ նա պետք է լայնորեն ծավալի յերիտասարդության կըր-թության, ուսման ու դաստիարակության խնդիրը՝ լենինիզմի վորով։

Մենք կարիք չենք զգում բառիս տառացի իմաս-տով ինքներս կազմելու մեր ծրագիրը։ Լենինյան կոմյերիտմիությունը հարկ չի դրում ինքը վորոնելու իր զարգացման ուղիները։ Մեր ծրագիրը մեխ ու ամ-բողջությամբ հիմնված է յերիտասարդության կո-մունիտական դաստիարակության լենինի-Ստալինի ուսմունքի վրա։ Լենինն ու Ստալինը մեզ նշել են այն ուղիները, վորոնցով պետք է ընթանա կոմյերիտմիու-թյունը։

Լենինի ճառը կոմյերիտմիության III համագու-մարում, վոր նա արտասանել և ավելի քան 15 տարի սրանից առաջ, ըստ եյության կոմյերիտմիության ծրագիրն ե, վորով կոմյերիտմիությունը դեկավար-վում է մինչև այս որերս և պիտի զեկավարվի հետա-գում։

Ընկեր Ստալինի ցուցումները, նրա ճառերը կոմ-

յերիտմիության Համամիութենական V կոնֆերենցիա-յում, Համամիութենական VIII համագումարում, նրա բնորոշումը կոմյերիտմիության դերի վերա-բերյալ պրոլետարիատի զիկատառութայի սիստե-մում, վոր նա տվել է «Լենինիզմի հարցերը» աշխա-տության մեջ, նրա պատասխանները «Կոմսոմոլյան Правда»-ի խմբագրության 1925 թ. տված հարցե-րին, նրա վորզույնները կոմյերիտմիության՝ վերջի-նիս 10-ամյա և 15-ամյա հորելյանների առնչու-թյամբ, վերջապես, նրա վերջին ցուցումները կոմ-յերիտմիության աշխատանքի վերակառուցման մա-սին, նրա դիտողությունները կոմյերիտմիության ծրագիրն ու կանոնադրությունը կազմելու առնչու-թյամբ տալիս են լենինյան կոմյերիտմիության դոր-ծունեյության խակական ծրագիրը։

Մեր ինդիրը գլխավորապես այն եր, վորովեսպի կա-րողանայինք այս բոլորից, յերիտասարդության կո-մունիտական դաստիարակության լենինի-Ստալինի ամբողջ ուսմունքից ճիշտ յեղակացություններ ա-նել և նշել պրակտիկ խնդիրներ մեր ամբողջ աշխա-տանքի համար։

ՀԱՄԼԿՅԵՄ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԴԵՐՆ ՈՒ
ԲՆՈՒՅԹԸ

Բնկերներ, ի՞նչպես ե գնում մեր նոր ծրագիրը կոմյերիտմիության դերի, նշանակության ու բնույթի հարցը։ Սա մեկն է այն առավել կարևոր հարցերից,

վոր հարկավոր ե պարզաբանել յերիտասարդությանը նոր ծրագիրն ընդունելու առնչությամբ։ Հայոնի յէ, վոր մեր Միության կազմակերպիչը յեղել ե կոմունիստական կուսակցությունը։ Կուսակցությունն ե կոմյերիտմիություն ստեղծողը, քանի վոր կուսակցությունը գտնում էր, վոր ամբողջ յերիտասարդությանը հանուն սոցիալիզմի հաղթանակի սլայքարելու դործին համար անհճառաժեշտ ե ռմբենալ յերիտասարդական մասսայական կազմակերպություն՝ կառուցված ինքնագործունելության հիման վրա, ամուր շաղկած կուսակցության հետ, ընդունակ ողմելու կապված կուսակցությանը՝ յերիտասարդությանը դաստիարակելու կոմունիզմի վորով։

Կուսակցության VIII համագումարը, վոր տեղի ունեցավ 1919 թ., քննեց կոմունիստական յերիտասարդական միության հարցը և վորոշում ընդունեց, վորի մեջ ասված ե.

«Յերիտասարդության մեջ կոմունիստական աշխատանքը հաջող կարող ե ընթանալ միայն ինքնուրույն կազմակերպությունների միջոցով, վորոնք ընթանում են կոմունիզմի դրոշի տակ, վորոնց մեջ յերիտասարդությունը կարողանար ցուցարել առավելադույն ինքնազործունություն, վորն անպայման անհճառաժեշտ ե նրա կոմունիստական դաստիարակության համար։ Այս կազմակերպությունի նախագծությունը կազմակերպությունների համար է հանդիպության համար և առաջարկությունների համար։ Կուսակցությունը յերբեք չի վորխել այս հիմնական հայացքը կոմյերիտմիության վերաբերմամբ՝ իբրև յերիտասարդության մասսայական անկուսակցական կազմակերպության, վոր հարում է Համկ(թ)կ-ին, աշխատում է ինք-նազործունեյության հիման վրա և նպատակ ունի յերիտասարդությանը դաստիարակել կոմունիզմի վորով։

Եյս առնչությամբ կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն ընկեր Ստալինի առաջարկությամբ ծրագրի նոր նախագծում տվյալ կենինյան կոմյերիտ-միության դերի ու բնույթի հետեւյալ բնորոշումը։

Հետեւարար, կոմունիստական յերիտասարդական միությունը, վորի մեջ մենք աշխատում ենք ձեզ հետ միասին, ստեղծվել ե կուսակցության կողմից իբրև բանավորա-դյուլացիական յերիտասարդության մասսայական կազմակերպություն, իբրև մի կազմակերպություն, վոր կոչված ե կուսակցության համար թեթևացնելու յերիտասարդության կոմունիստական դաստիարակությունը և ռեզել կուսակցության համար դեպքեցնելու յերիտասարդության կոմունիստական դաստիարակությունը և ռեզելը պատրաստելու կուսակցության համար և բանվոր դասակարգի բոլոր մասսայական կազմակերպությունների համար։ Կուսակցությունը յերբեք չի վորխել այս հիմնական հայացքը կոմյերիտմիության վերաբերմամբ՝ իբրև յերիտասարդության մասսայական կազմակերպության, վոր հարում է Համկ(թ)կ-ին, աշխատում է ինք-նազործունեյության համար և նպատակ ունի յերիտասարդությանը դաստիարակել կոմունիզմի վորով։

Եյս առնչությամբ կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն ընկեր Ստալինի առաջարկությամբ ծրագրի նոր նախագծում տվյալ կենինյան կոմյերիտ-միության դերի ու բնույթի հետեւյալ բնորոշումը.

«Համամիութենական լենինյան կոմունիստական Յերիտասարդական Միությունը հանդիսանում է ՀամԿ(բ)Կ-ին հարող մասսայական անկուսակցական կազմակերպություն, իր շարքերում միացնում է քաղաքի ու գյուղի առաջավոր, քաղաքականապես դրագետ աշխատավոր յերիտասարդության լայն խալերին։ ՀամԼԿՅԵՄ-ի խնդիրն եւ ողնում կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությանը՝ յերիտասարդությանն ու յերեխաներին կոմունիզմի վողով դաստիարակելու գործում։ ՀամԼԿՅԵՄ, համակրելով ՀամԿ(բ)Կ ծրագրին, ողնում է բոլշևիկների կուսակցությանն ու Խորհրդային կառավարությանը կատարելու պատճական մեծ խնդիրը—կոմունիստական հասարակության կառուցումը։

ՀամԼԿՅԵՄ հանդիսանում է ՀամԿ(բ)Կ ողնականն ու նրա ռեզերվը։

Այս հարցադրումը, վոր բղխում է կուսակցության բոլոր վորոշումներից Յերիտասարդական միության բնույթի հարցի վերաբերյալ, լենինի և Ստալինի ցուցումներից, բացարձակապես պարզ պիտի լինի։

Բայց և այնպես հարկավոր է խոստովանել, վոր կոմյերիտականների և նույնիսկ կոմյերիտմիության զեկալար աշխատողների մեջ գեռես հանդիպում և Միության դերի ու նշանակության ըըմբոնում։

Հենց կոմյերիտմիության ծրագրի նախագծի քննարկումը, վոր տեղի ունեցավ Համադրումարի նախորյաց

կին, վորով ընկերների մեջ ի հայտ բերեց այնպիսի տրամադրություններ, վորոնք վկայում են Յերիտասարդական միության դերն ու խնդիրները ըըմբոնելու մասին և այս առնչությամբ ցույց տվեց, վոր անհրաժեշտ է խնամքով պարզաբանել նոր ծրագրի դիմավոր կետերը։


Ահայսամիկ, որինակ, Խարկովից մի կոմյերիտական իր նամակում ծրագրի նախագծի առթիվ գրում է հետեւյալը.

«Միության ծրագրի նախագծում ասլած և, վոր ՀամԼԿՅԵՄ համակրում է կուսակցության ծրագրին։ Յես արմատապես սխալ եմ համարում այսպիսի ձեւակերպումը։ Զե՞ վոր կոմյերիտմիությունը վոչ միայն համակրում է ՀամԿ(բ)Կ-ին, այլև նրա զեկալարությամբ պայքարում են նոր, սոցիալիստական հասարակության համար, ակտիվ կերպով ողնում է կուսակցության իրականացնելու նրա պիտակոր գիծը։

Լսուիս պետք ե ասել. «Կոմյերիտմիությունը համամիտ է կուսակցության ծրագրին, ընդունում է այն, սայդքարում է նրա իրականացման համար»։

Կամ թե չե, այնուհետև, այս նույն առիթով մի խումբ կոմյերիտական աշխատողներ Նովոսիբիրսկից գրում են.

«Լո՞նչ է կոմյերիտմիությունը։ Մեզ թվում ե, վոր այս հարցին ծրագրում հարկավոր ե պատասխանել ամամիութենական ին-



նինյան յերկոտասարդական միությունը մասսա-
յական հասարակական-քաղաքական, վոչ-կու-
սակցական կազմակերպություն է, վոր անո՞ի-
ջականորեն հարում և Համեկ(բ)կ-ին»

Ծրագրի նախազծում առված է. «Համակրե-
լով Համեկ(բ)կ ծրագրին, Համեկօթե՛ ողնում և
բուհեկների կուսակցությանն ու Խորհրդային
կառավարությանը»: Զափաղանց պասսիվ չէ^o
արդյոք այս ձեւակերպումը: Մենք առաջարկում
ենք գրել այսպիս. «Ընդունելով Համեկ(բ)կ
ծրագրը, Համեկօթե՛ հանդիսանում և կու-
սակցության և Խորհրդային կառավարության
առաջավոր ողնականը»:

Այս որինակները վկայում են, վոր վորոշ ընկերներ
փորձում են ըստ եյության կոմյերիտմիությունը
նույնացնել կուսակցության հետ, չըմբանելով այն
տարբերությունը, վոր կա մի կողմից կուսակցության
միջև, վորը դեկավար ուժ է, պրոլետարիատի ավան-
դարդը, և մյուս կողմից կոմյերիտմիության, վորը
հանդիսանում և կուսակցության զեկավարությամբ
աշխատող մասսայական կազմակերպություններից
մեկը:

Ընկեր Ստալինն իր «Լենինիզմի հարցերի շուրջը»
աշխատության մեջ կուսակցության մասին դրում և
հետեւալը.

«Կուսակցության ուժն այն է, վոր նա իր
մեջն և առնում պրոլետարիատի բոլոր լավա-
գույն մարդկանց՝ նրա բոլոր մասսայական կազ-

մակերպություններից: Նրա դերն այն է, վոր
միավորի պրոլետարիատի առանց բացառության
բոլոր մասսայական կազմակերպությունների
աշխատանքը և ուղղի նրանց գործողություն-
ները դեպի մի նպատակ, դեպի պրոլետարիատի
աղաւագրման նպատակը...»

Կուսակցությունը հիմնական դեկավարություն
է պրոլետարիատի դեկատատուրայի սխտեմում:

«Կուսակցությունը պրոլետարիատի դաս-
կարգային միավորման բարձրագույն ձևն է»
(Լենին)» (Ստալին, «Լենինիզմի հարցերը»,
հայ. Էջ 150—151):

Իսկ ի՞նչ է Յերկոտասարդական միությունը:

Ընկեր Ստալինն այս հարցին պատասխանում է
միանդամայն պարզ և վորոշակի, ասելով, վոր Յերի-
տասարդական միությունը

«Դա բանվորական և դյուղացիական յերիտա-
սարդության մասսայական կազմակերպությունն
է, վոչ-կուսակցական, բայց կուսակցությանը
հարող կազմակերպություն: Նրա խնդիրն եւ ող-
նել կուսակցությանը յերիտասարդ սերունդը սո-
ցիալիզմի վորով դաստիարակելու գործուա: Նո-
յերիտասարդ սեղերիներ և տալիս պրոլետարիա-
տի մնացած բոլոր մասսայական կազմակերպու-
թյուններին՝ կառավարման բոլոր ճյուղերի հա-
մար: Յերիտասարդության միությունն առան-
ձին նշանակություն ձեռք բերեց պրոլետարիատի
դեկատառուրան ամրապնդվելուց հետո, պրոլե-

տարիատի լայն կուլտուրական ուշ դաստիարակ-
չական աշխատանքի ժամանակաշրջանում» («Լե-
նինիդմի հարցերը», հայ. էջ 150) :

Կարծեմ պարզ եւ, ընկերնե՛ր : Կուսակցության և
կոմյերիտմիության միջև տարրերությունը չառ ելա-
կան եւ, և այն չնկատելը շատ գիշար ե : Այն չնկատել
կարող են միայն մարդիկ, վորոնք չեն ըմբռնում կու-
սակցության և կոմյերիտմիության կառուցման բուժ-
չիմքերը : Յել հենց այն պատճառով, վոր միքանի
ընկերներ սխալ են պատկերացնում Յերիտասարդա-
րներները միության խնդիրները, կոմյերիտմիությունը
նույնացնելով կուսակցության հետ, անդանք հանդում
են սխալ յեղբակացությունների և առաջարկում են խո-
հն սխալ վերակացությունների և առաջարկում
ուշ վոչ թե այն մասին, վոր Համելիշեմ համակրում
է Համեկ(բ)կ ծրագրին, այլ այն մասին, վոր նա ըն-
դումում և կուսակցության ծրագրը : Հենց այս պատ-
ճառում ամեն կերպ ջանում են ԱՊՀանցել
պատճառով ել նրանք ամեն կերպ ջանում են ԱՊՀանցել
կոմյերիտմիության, իբրև անկուսակցական կազմա-
կումյերիտմիության, բնորոշումը, սխալ կերպով կարծելով,
թե այդ նիստացնում ե կոմյերիտմիության դերը :

Իրականում այս բռնորդն անխոտիր անհեթեթություն
է : Համակրել Համեկ(բ)կ ծրագրին, չի նշանակում
է ոգնել կուսակցությանն իրականացնելու նրա
կում և ոգնել կուսակցությանն իրականացնելու նրա
ծրագրը : Կոմյերիտմիությունն այս տարիներին հըս-
կարի կայական աշխատանք ե կատարել, ողնելով կուսակ-
չական աշխատանք ե կատարել, ողնելով կուսակ-
չական աշխատանք ե ցությանը սոցիալիզմի կառուցելու . նա մասնակցել ե
ցությանը սոցիալիզմի կառուցելու . նա մասնակցել ե
ցությանը սոցիալիզմի կառուցելու . նա մասնակցել ե

թյունների ու կումնառեսությունների շինարարու-
թյանն ու յուրացմանը : Սա ակտիվ պայքար ե յեղել
սոցիալիզմի համար, վորը ծառայել ե իրեն լուրջ
գովրոց կաղմակերպիչների, մասնագետների ու աշ-
խատողների բազմաթիվ կադրեր պատրաստելու հա-
մար և ԱՊՀ անտեսական և կուլտուրական շինարա-
րության բոլոր ճյուղերում :

Իսկ վո՞րտեղից են վերցրել իմ մեջբերած նամա-
կել չեղինակները, վոր ողնել բոլչեկիների կուսակ-
ցությանն ու Խորհրդային կառավարությանը կոմու-
նիզմի կառուցելու, նշանակում և պասսիվ վերաբեր-
մունք ցույց տալ կուսակցության ծրագրին :

Նման տրամադրությունները վկայում են «ամեն ին-
չով կուսակցությանը նման լինելու» կեղծ ձգուման
մասին, և այս առնչությամբ այն բանը չըմբռնելու
մասին, վոր կոմյերիտմիության գոյության խմասն
ողնել կուսակցության աշխատավոր յերիտասարդու-
թյան ամենալայն խավերին գաստիարակելու կոմու-
նիզմի վոգով :

Ընկեր Կոսարեկն իր զեկուցման մեջ միանդամայն
իրավացիուն ասաց, վոր մեզ վոչ մի յերկրորդ կու-
սակցություն պետք չե : Մեղ մոտ կա մի կուսակցու-
թյուն՝ լենինյան բոլչեկիյան կուսակցությունը, վորի
վեկալարութամբ մենք աշխատում ենք և վորը բան-
դեկալարութամբ մենք աշխատում ենք մեր զերի կարում : Իսկ նման տրամադրությունները վկայում
են այս հարցին սխալ մոտեցում ունենալու մասին :
Չե՞ վոր ժամանակին վոչ այլ վոք, քան Տրոյկին եր,

վոր գեմազողիկ կերպով ջանում եր յերիտասարդության մեջ՝ արմատացնել յերկրորդ կուսակցություն ստեղծելու անհրաժեշտության հակալենինյան, հակաբոլչելիյան միտքը, այն միտքը, վոր մեր յերիտասարդությունն «ավանդաբղի ավանդաբղն ե» և պետք է հավակնի դեկավար դեր կատարելու բանվորական շարժման մեջ:

Իրականում կուսակցության և կոմյերիտմիության տարբերության ըմբռնումը հանդում եր այն բանին, վոր յերբեմն կոմյերիտմիության մեջ մտնողներին առաջարկում եյին նույնակիսի պահանջներ, ինչ առաջարկում են Համեկ(ր)Կ շարքերն ընդունվողներին, իսկ այդ հանդամանքը հանդում եր կոմյերիտմիության՝ իրեն մասսայական դաստիարակչական կազմակերպության դերի թուլացման: Մարդիկ դատում եյին այսպես. «Քանի վոր մենք կոմյերիտականներին առաջարկում ենք այնպիսի պահանջներ, ինչ և կուսակցության անդամներին, ապա մենք ինչո՞ւ քարշ գանք և աշխատենք նրանց դաստիարակման վրա, ովք դեռևս չի համազատափանում այս պահանջներին: Նրանց սլարդապես չպետք ե ընդունել Միության մեջ»:

Յևս պետք ե ձեղ առեմ, վոր մեր ծրագրի սկզբան կան նախազծում կային մի շարք կետեր, վորոնք բարձաթիվ պահանջներ եյին սլարդունակում կոմյերիտականներին:

Բնկեր Ստալինը միանդամայն իրավացիութեան սաց մեկ, վոր այս սխալ է: Նա մեղ ասաց. յեր

նայում ես ձեր ծրագրին, ինչ դուք պահանջում եք կոմյերիտմիության շարքերը մտնող վահանչություն յերիտասարդությունից, ապա տարակուսում ես, թե վորն է կոմյերիտմիության մեջ մտնողներին առաջարկող պահանջների տարբերությունն այն պահանջներից, վոր առաջարկում են կուսակցության մեջ մտնողներին: Չե՞ վոր դուք կոչված եք դաստիարակելու մեր աշխատավոր յերիտասարդությանը:

Յեկ այստեղ ընկեր Ստալինը հիմնավորակես ուղղեց մեզ, պարզաբանեց, վոր կոմյերիտմիության խնդիրը պետք է լինի դաստիարակել մարդկանց, համբերատար կերպով, մանրամասն, հիմնավորակես պարզաբանել յերիտասարդությանն այն ամենը, ինչ նա չի լուրսնում: Նա ուղղակի այսպես ել նշեց, վոր կոմյերիտմիությունը պրոպագանդիստական կարգակերպությունն է, մի կազմակերպություն, վորն իր ամբողջ աշխատանքով մարքսիստական-լենինյան ուսումնական պրոպագանդ է մղում, վորը պարզաբանում է յերիտասարդությանը նրա համար մութ հարցերը, ոգնում է նրան դաստիարակվելու կոմունիզմի վորով: Ե՛լ ավելի համբերատար, Ե՛լ ավելի համար աշխատանք ամենք ամեն մի յերիտասարդի դաստիարակման վրա, —ահա թե ինչ է պահանջում մեղնից ընկեր Ստալինը:

Ահա թե ինչու մենք հարկ զգացինք մեր ծրագրից հանել բոլոր այն կետերը, վորոնք բարձր պահանջներ եյին պարունակում կոմյերիտականներին: Այդ բոլորի վորիսարեն մենք նշեցինք, թե ինչ վորով պետք ե աշխատավոր մենք նշեցինք:

խատանք կատարել կոմյերիսմիության մեջ, վորպեսդի կոմյերիտականներին ու կոմյերիտուհիներին դաստիարակենք կոմունիզմի վոռով:

Այս առնչությամբ կոմյերիտմիության ծրագիրը նոր ձևով եղանակ կոմյերիտմիության կազմի և յերիտասարդության զանազան խավերին վերաբերվելու հարցը:

Յեթև կուսակցության և կոմյերիտմիության փոխհարաբերությունների հարցի մեջ ծրագրի տված ձևակերպումը սկզբունքորեն վոչ մի նոր բան չէ մացնում, այլ միայն, հետեւելով ընկեր Ստալինի ցուցումներին, դարձացնում ե այն դրույթները, վոր ընդունել ե կուսակցությունը դեռևս շատ տարիներ առաջ, առաջ յերիտասարդության զանազան խավերին վերաբերվելու հարցը ծրագիրն այլ կերպ ենում:

Հին ծրադրում կոմյերիտմիության սոցիալական կազմի հարցը բնորոշված եր այսպես.

«Համապրոլետարական շարժման մի մասը մինելով, ՈԿՅԵՄ իր առաջադրություններով ու աշխատանքով դասակարգային, պրոլետարական կազմակերպություն է: Նրա հիմնական և ղեկավարի կորիզը բանվոր յերիտասարդությունն է:

ՈԿՅԵՄ իր շարքերն եներգբավում. բանվոր յերիտասարդության լայն մասսաներին և ընդունում ե քաղաքային մանր բուրգուազիայի միջավայրից յեկած առանձին անձանց, վորոնք ապացուցել են իրենց նվիրվածությունը ոլորե-

տարիատին: Գյուղում ՈԿՅԵՄ հենվում ե գյուղացիական ամենաչքավոր և բարբակ յերիտասարդության վրա, իր շարքերն ընդունելով նաև միջակ յերիտասարդության՝ կոմունիզմի կողմնացնորդ լավագույն տարրերին»:

Իր ժամանակի համար այս ձևակերպումը ձիչուր:

Բանվոր յերիտասարդությունն անցյալում իր դրության պատճառով, իհարկե, յերիտասարդության միակ խումբն եր, վոր կարող եր առաջովել պըոլետարական ղեկավարությունը կոմյերիտմիության մեջ: Այս խմաստով մեր յերկրի բանվոր յերիտասարդությունը հիբավի պատճական դեր խաղաց: Բանվոր յերիտասարդության ներկայացուցիչները, ղեկավարդիքեր զբավելով կոմյերիտմիության մեջ, հիմնական ղեկավար կորիզ կազմելով Միության մեջ, կուսակցության ղեկավարությամբ նրա համար առաջովեցին ձիչու զարդացում և աճում: Զիս մեր յերկրում մի բնադրաւու, վորսեղ չաշխատեն, կոմունիտատական մի բանվագաւու, կորսեղ չաշխատեն, կոմունիտատական միունիտարեն կենինդրապի, Ուկրաինայի, Մոսկվայի, Ռուբակի և պրոլետարական այլ կենտրոնների բանվոր յերիտասարդության ներկայացուցիչները: Զանահովելով բանվոր յերիտասարդության ղեկավար առաջնորդ մենք վոչինչ չելինք կարող անել թե՛ զյուլացիական յերիտասարդության դաւադարակման և թե՛ աշխատավոր յերիտասարդության տիարակման և աշխատավոր յերիտասարդության այլ խավերի դաստիարակման բնադրավառում:

Գյուղում կոմյերիտմիությունը պետք է հենվեր ամենաչքավոր գյուղացիության և բատրակ յերիտասարդության վրա և իր շարքերն ընդուներ միայն լավագույն միջակ յերիտասարդությանը, քանի վոր մեր շնարարությունն ընթանում եր կուլակության հետ ամենակատաղի բաղխումների սլայմաններում, քանի վոր բատրակ և ամենաչքավոր գյուղացիական յերիտասարդությունը միայն կարող եր կոմյերիտմիության համար ծառայել իրեւ ամուռ հենարան։

Իսկ այժմ շատ բան է փոխվել։ Առցիալիզմի հաղթանակն այս բոլոր հարցերը նոր ձևով է դնում։

Ամենից առաջ չկա և գյուղթյուն չունի վոչ մի ամենաչքավոր գյուղացիական յերիտասարդություն, չկան նաև միջակներ, — որա փոխարեն մենք ունենք կուլտնտեսական գյուղացիական յերիտասարդություն։ Համախմբված կուլտնտեսություններում սոցիալիտական արտադրությամբ, և գյուղատնտեսական յերիտասարդ բանվորներ, փորոնք աշխատում են խորհունեսություններում։

Փոփոխվել են նաև ծառայող յերիտասարդություն դեմքը։ Նրա հիմնական կազմերը ներկայումս դիմավորապես կազմված են բանվորների, գյուղացիների մասնագետների, Կարմիր բանակի հրամանատարների դավակներից։ Փոփոխվել են նաև յերիտասարդ ինտելեկտները, ինժեներները, տեխնիկները, բժիշկները, մանկավարժները, գյուղատնտեսները — ոյս բոլորն իրենց գույքի մասով սերվում են պրոլետարական միջավայրից, աշխատավոր գյուղացիության մի-

ջավայրից, մարդիկ, վորոնք իրենց ամբողջ կյանքով անխցիկ կապված են սոցիալիտատական շինարարության հետ, մարդիկ, վորոնց աճեցրել ե կոմյերիտմիությունն ու խորհրդացյին իշխանությունը։ Մենք կարո՞ղ ենք արդյոք պահպանել մեր հին վերաբերմունքը դեպի աշխատավոր գյուղացիության տարբեր խավերը։ Իհարկե, վոչ։ Փոփոխված պայմանները պահանջում են այլ մոտեցում դեպի գործը, այլ վերաբերմունք դեպի յերիտասարդության տարբեր խավերը։

Մենք այժմ լիակատար իրավունքով գործ ենք ածում «խորհրդացյին ժողովուրդ» արտահայտությունը, վորովհետեւ գասակարգացյին մահմաններն ու տարբերությունները վերանում են մեր յերկրում և մեր հասարակությունը կազմված ե քաղաքի ու գյուղի ազատ աշխատավորներից։ Այս առթիվ Ռոյ Հովարդի հետ ունեցած հայոնի զրուցի մեջ ընկեր Ստալինն ասաց հետեւյալը։

«Մեր մոտ չկան միմյանց հակառակող կուսակցություններ, ճիշտ այնպես, ինչպես մեղ մոտ չկան միմյանց հակառակիր կապիտալիտաների դասակարգ և կապիտալիտաներից շահագործվող բանվորների գասակարգ։ Մեր հասարակությունը բացառապես կազմված ե քաղաքի ու գյուղի ազատ աշխատավորներից՝ բանվորներից, գյուղացիներից, ինտելեկտներիցից»։

Առաջ կոմյերիտմիությունն իր կազմով բանվորացյուղացիական կազմակերպություն եր։ Նրա շարքե-

բում միավորված եր առաջավոր յերիտասարդությունը, վոր պատկանում եր յերկու տարրեր դասակարգին և ուրիշի աշխատանքը չչահագործող աշխատավոր դյուլացիների դասակարգին։ Հենց այս և պատճառը, վոր Միության մեջ այնպիսի սրությամբ եր դրված պրոլետարական կորիզի և պրոլետարական դեկավարության հարցը։

Այժմ կոմյերիտմիության մեջ միավորվում ե խորհրդային ժողովրդի յերիտասարդ սերնդի առաջավոր մասը։

Ահա թե ինչու մենք ծրագրում դրում ենք, ինչպես մեզ սովորեցնում ե ընկեր Ստալինը, վոր կոմյերիտմիությունը քաղաքի և գյուղի խորհրդային առաջավոր յերիտասարդության կաղմակերպությունն ե, վոր կոմյերիտմիության խնդիրների մեջ և մտնում բանվոր, գյուղացի, ծառայող յերիտասարդության և յերիտասարդ խնտելիքենցիայի քաղաքական դաստիարակության աշխատանքը։

Առբհրդային իշխանության և բոլշևիկների կոմունիստական կուսակցության համար այս պայմաններում համարապես կարեոր և կոմունիզմի վոզով դաստիարակել թե՛ յերիտասարդ բանվորներին, թե՛ յերիտասարդ կոլտնտեսականին, թե՛ յերիտասարդ ծառայողին, և թե՛ յերիտասարդ խնտելիքենալին։ Յերիտասարդության այս բոլոր յենթախավերը սոցիալիստական համարակության կադրերն են, վորոնք մասնակցում են կոմունիստական հասարակության ստեղծման մեծադույն դործին։

Կոմյերիտմիությունն անկուսակցական կազմակերպություն է, մասսայական, դաստիարակչական կազմակերպություն, վոր միավորում և քաղաքի ու գյուղի աշխատավոր յերիտասարդությանը, բայց կոմյերիտմիությունը սրա հետ միասին կոմունիստական կաղմակերպություն և, քանի վոր նրա նպատակն յերիտասարդությանը դաստիարակել կոմունիզմի վորդով, քանի վոր նա համակրուտ ե կոմունիստական կուսակցությանը, ունում և խորհրդային կառավարությանն ու կոմունիստական կուսակցությանը կոմունիստական համարակություն կառուցելու։ Կոմունիստական յերիտասարդական միությունն իր ամբողջ աշխատանքը կատարում է կուսակցության դեկավարությամբ։

Ընկեր Ստալինը ամել է.

«Ապահովել յերիտասարդության վտանգությունը դեպի մեր կուսակցությունը, ապահովել մեր կուսակցության դեկավարությունը կոմյերիտմիության մեջ — այս և խնդիրը։ Կոմյերիտականը պետք է հիշի, վոր կուսակցության դեկավարության ապահովումն ամենագլխավորն ու ամենակաշեարն և կոմյերիտմիության ամբողջ աշխատանքում։ Կոմյերիտականը պետք է հիշի, վոր առանց այսպիսի դեկավարության կոմյերիտմիությունը չի կարող կատարել իր հիմնական խնդիրը — բանվորացյուղացիական յերիտասարդության դաստիարակությունը սլրուետարդութիւնը գիտական դուռը։

(Ստալին, Կոմյերիտամիության խնդիրների մաս-
սին։ Տես «Լենինը և Ստալինը յերիտասարդու-
թյան մասին» ժող. ոռուս. Էջ 179, 1936 թ.):

Կոմյերիտամիությունը յերբեք չի ունեցել կուսակ-
ցության դժիգ տարրերվող իր հատուկ քաղաքական
դիմք և չի կարող ունենալ։ Միայն լենինիզմի թշնա-
միները՝ արոցկիստները, զինովյալականներն ելին
չանում իրմանց նպատակների համար կոմյերիտամիու-
թյունը հակագրել կուսակցությանը, մի ամբողջ շարք
կոմյերիտական աշխատողներին այն միտքը պատվաս-
տել, թե իրը կոմյերիտամիության մեջ կարող և թույ-
լատրելի լինել իր հատուկ վորեւե քաղաքական դիմք։

Կոմունիստական յերիտասարդական միությունը
մշտակես վճռական պայքար է մղել կուսակցության
թշնամիների, լենինիզմի թշնամիների դեմ։ Ու այ-
սուհետեւ ել կոմյերիտամիությունն իր պարտականու-
թյունն և համարում ամենավճռական ու համառ
պայքար մղել լենինիզմի թշնամիների, կոմունիստա-
կան կուսակցության թշնամիների փորձերի դեմ՝ ներս
խցկելու իրենց հայտացքները, առականելու մեր դոր-
ծը։ Լենինիզմից ամեն մի չեղում կոմյերիտամիության
մեջ կհանդիպե ամենաղաժան հակահարվածի։

Լենինյան կոմյերիտամիության՝ իրեւ մասսայական
կազմակերպության ինդիքն և աշխատավոր յերիտա-
սարդությանն ու յերեխաներին համախմբել կոմու-
նիստական կուսակցության շուրջը, յերիտասարդու-
թյանը սովորեցնել ամենախոր հարդանք ունենալու
դեպի խորհրդային իշխանությունը, պարզաբանել յե-

րիտասարդությանը, վոր այն ամենը, վորից նա այժմ
ողովում է կյանքում՝ արդյունք և Հոկտեմբերյան
սոցիալիստական մեծ հեղափոխության, արդյունք է
խորհրդային իշխանության կատարած ամենահսկայա-
կան աշխատանքի։

Կոմյերիտամիությունն աշխատավոր յերիտասար-
դությանը համախմբում է խորհրդային իշխանության
շուրջը, ողնում է կուսակցությանը կոմունիստական
հասարակությունն կառուցելու։ Խորհրդային մեծ Մի-
ության մեր յերիտասարդությունն իր ամբողջ բախտը
լիովին ու ամբողջությամբ կապում է պլութարականը
մեծ գործի բախտին, կոմունիստական կուսակցու-
թյան բախտին, կոմունիզմի կառուցման գործի համար
մղվող ամբողջ պայքարին։ Այս բանում յերիտասար-
դությունը հետեւում է լենինի մեծ պատղամներին։
Լենինը՝ հանդես գալով ՌԿՅԵՄ համառուսաստանյան
III համագումարում, ասաց։

«Այն սերունդը, վորի ներկայացուցիչներն
այժմ մոտ 50՝ տարեկան են, չի կարող հույս ու-
նենալ, վոր կտեսնի կոմունիստական հասարա-
կությունը։ Մինչև այդ ժամանակ այս սերունդը
կմահանա։

Իսկ այն սերունդը, վորն այժմ 15 տարեկան-
ե, նա թե՛ կտեսնի կոմունիստական հասարա-
կությունը և թե՛ ինքը կկառուցի այս հասարա-
կությունը։

Յեկ նա պետք է իմանա, վոր իր կյանքը

ամբողջ ինդիրն ե այս հասարակության կառուցումը» (XXX հ., էջ 416—417) :

Ընկերներ, յետ պետք ե առել, վոր կոմյերիումիության ծրագրի գլխավոր իմաստը, այն ծրագրի, վոր մենք պետք ե ընդունենք, կարելի յեր մի քանի խոսքով ձեւակերպել այսպես. խորհրդային ժողովրդի յերիտասարդ սերնդի՝ Լենինյան կոմյերիտմիության զեկավարությամբ միավորված յերիտասարդության ամբողջ կյանքի խնդիրն ե՝ պայքարել կոմունիստական համար :

Համեկչեց ծրագրի ու կանոնադրության նախագծերի առթիվ ընկեր Ստալինի արած ուղղումներն ու դիտակությունները հանդիսանում են նրա այն ցուցումների զարգացումը Միության աշխատանքի վերակառուցման մասին, վոր նա արել ե ըստի. Կոստարենի և կոմյերիտմիության ուրիշ աշխատողների հետ ունեցած հայտնի զրույցում մի տարի սպազ:

Այս ուղղումներն ու դիտողությունները փոփոխում են կոմյերիտմիության աշխատանքի ամբողջ բովանդակությունը նոր պայմանների համեմատ: Ծրագրի նախագիծը, վոր մենք առաջարկում ենք X համադրմարին, ամենից առաջ զարգացնում ե Լենինի ու Ստալինի այն ցուցումները, վոր յերիտասարդության զմանավոր խնդիրն ե՝ սովորել: Մեր ծրագիրը յերիտասարդության կոմունիստական համակողմանի դասիարակության կազմակերպման ծրագիր ե: Աչաթե ինչու ծրագիրը հատուկ բաժիններ ունի յերիտասարդության քաղաքական դասիարակության վերա-

բերյալ, կոմյերիտմիության խնդիրների վերաբերյալ դպրոցում և յերեխաների մեջ աշխատելու ասպարեզում, յերիտասարդության կրթության, դիտությանը տիրապետելու ասպարեզում, յերիտասարդության ֆիզիկական դարդաշման ասպարեզում: Կոմյերիտմիության գործողությունների այս ամբողջ պրակտիկ ծրագրին ուղղված ե գեղի կենտրոնական, զմանավոր լոգունդի իրականացումը, վոր տվել ե Լենինը և զարգացրել Ստալինը, այն ե՝ սովորել, սովորել և սովորել:

Մեզ մոտ վորու ընկերներ յմրեմն կարծում են, թե քանի վոր կոմյերիտմիությունը մենք բնորոշում ենք իրեւ անկուսակցական դաստիարակչական կաղմակերպություն, ապա սրանով մենք մի տեսակ նվազեցնում ենք կոմյերիտմիության դերն ու նշանակությունը: Այսպես մտածողները խորապես սիալվում են: Ծնդհակառակը՝ խոսքը վերաբերում ե յերկրում կոմյերիտմիության դերի հսկայական չափով անելուն: Ինքներդ դատեցեք. յեթե առաջ կոմյերիտմիությունն աշխատանք եր կատարում գերազանցապես բանվոր յերիտասարդության մեջ քաղաքում և դյուզացիական յերիտասարդության մի մասի մեջ՝ դյուզում, ապա այժմ մենք պետք ե քաղաքական-դաստիարակչական աշխատանք կատարենք քաղաքի և գյուղի ամբողջ աշխատավոր յերիտասարդության մեջ: Յեթե առաջ մենք քիչ ուշադրություն ենինք դարձնում տարրական, միջնակարգ և բարձրագույն դպրոցի աշխատանքի վրա, ապա այժմ մեր առջև հսկայական

ինդիբներ են դըված այս բնագավառում, վորտեղ պատրաստվում են սոցիալիստական շինարարության կաղըեր: Կուսակցությունը կոմյերիսմիության վրա ամենալուրջ խնդիրներ ե գնում յերեխաների մեջ աշխատելու ասպարեզում: Յես ձեզ կհիշեցնեմ դեք միայն մի այնպիսի փաստ, ինչպիսին Մանկական հաստարակչության համձնումն ե Համլիթե՛ս կենտկոմի տնօրինությանը:

Կուսակցությունը մեղ դրել ե այն ճակատամասի վրա, վորտեղ լուծվում ե ամբողջ խորհրդային ժողովրդի ապագան ներկայացնող յերիտասարդ սերնդի դաստիարակության նակատագիրը: Ահա թե ինչու այս ծըագիրը, վոր մենք առաջարկում ենք համագումարի ուշադրության, վկայում ե կոմյերիտմիության հարանուն դերի ու նշանակության մասին:

ԱՇԽԱՏԱՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-ՈՒՄ, ՆՐԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՆՐԱ ՄԻՋԻՑ ԿՐԹՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ԽՍՀՄ-ում յերիտասարդության աշխատանքի ու կրթության բոլոր արմատական հարցերը, վորոնք կամիստալիստական համարակարգի պայմաններում յերբեք չեն կարող լուծվել աշխատավոր յերիտասար-

դության համար, լիովին լուծված են հոգում յերեւանաբության:

Այս հարցերն, իհարկե, կարող եյին լուծվել միայն խորհրդային կարգերի պայմաններում, ամեն մի շահագործման վոչնչացումից հետո:

Յերիտասարդության աշխատանքի ու կրթության արմատական հարցերը մշտագես հանդել են հետեւյալներին:

1. Յերիտասարդության, ինչպես և ամբողջ բանվոր դաստիարակի համար տնտեսական դրության տեսակետից ամենատարմատարկան հարցը մշտագես յեղել է գործազրկության վերացման հարցը: Գործազրկությունը բանվորների ամենադժնագակ պատուհանն ե: Մեղ մոտ գործազրկությունը վերացված ե լրիվ համբողջությամբ: Այժմ արդեն վերանում ե գործազրկությունը իսկ հասկացողությունը, իսկ նոր հակության բուն հասկացողությունը, մինչդեռ բանվոր դաստիարակի նախընթաց սերնդի համար գործազրկությունն ամենադաժան աղետների ու գժբախտությունների ալլըցուրն եր:

2. Աշխատանքային որվա տևողության հարցը: Անցյալում բանվոր յերիտասարդության կրանքի արմատական հարցերից մեկն եր պայքարը հանուն Տժամյա աշխատանքային որվա բոլոր բանվորների համար, հանուն կրծատ աշխատանքային որվա՝ յերիտասարդության ու անչափահանքների համար:

Հայտնի յե, վոր մեղ մոտ այս հարցերը լուծված են նախ մտցնելով Տժամյա, իսկ ապա 7-ժամյա աշ-

Խստանքային որը բոլոր բանվորների համար և սահմանելով նժամիա աշխատանքային որ 16—18 տարեկան յերիտասարդության համար :

3. Յերեխաների ու անչափահասների աշխատանքի պաշտպանության հարցը : Մանկական աշխատանքի շահագործման դեմ պայքարելը հանդիսանում էր բանվոր դասակարգի պայքարի արմատական կարեռագույն հարցերից մեջը : Հայտնի յեւ, վոր կապիտալիզմի ժամանակ յերեխաների աշխատանքն ամենաժամանական աշխատանքը և յենթարկվում է անողոք շահագործման : Կապիտալիզմը յերեխաներին շահագործում է ամենավաղ հասակից, հաճախ 6—7 տարեկանից :

Մեզ մոտ այս բանը չկա : Մինչև 16 տարեկան անչափահասների աշխատանք չի կիրառվում ձեռնարկություններում : Մինչև 18 տարեկան յերիտասարդության աշխատանքը արդելված է կիրառել ստորերկյալ և առողջության համար առանձնապես վիճակակար աշխատանքներում :

4. Յերիտասարդության համար ամենաարմատական հարցը մշտապես յեղել է արտադրողական աշխատանքը անչափահասների ուսուցման հետ միացնելու հարցը, վոր կարմում է յերիտասարդության աշխատանքի սոցիալիտական վերակազմության ելությունը : Արտադրողական աշխատանքն ուսուցման հետ զուգորդելու խնդիրը դրել է տակավին Մարքսը . այս խնդիրի իրականացման մեջ նա տեսնում էր միակ ուղին կոմունիտական հասարակության համակողմանի զարգացած մարդիկ դաստիարակելու համար :

Մեզ մոտ այս խնդիրն ամբողջությամբ լուծված է : Այն լուծված և ամենից առաջ ֆաբրիկա-դործարանային աշակերտության դպրոցներ ստեղծելով և ընդհանուր ու արտադրական ուսուցումը կազմակերպելով :

5. Կապիտալիտական հասարակակարգի համար բնորոշ և բանվոր և զյուղացի յերիտասարդության աշխատանքի և, գլխալորապես, նրանց կրթության պայմանների խիստ հակադրությունը :

Այժմ ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթելու հետևանքով գյուղում արմատագես փոփոխվում են գյուղացի յերիտասարդության կյանքի պայմանները :

Բանվոր և գյուղացի յերիտասարդության միջև նրանց աշխատանքի ու կրթության պայմաններում դոյցություն ունեցող հակադրությունն այժմ վերանում է :

Գյուղի կողեկտիվացումը, մեծ քանակությամբ մեքենաների մուծումը գյուղատնտեսության մեջ, նոր տեխնիկայի մուծումը տանում են դեպի գյուղատնտեսական աշխատանքի վերածումը ինդուստրիալ աշխատանքի մեջ տարատեսակի : Կոլոնտեսական գյուղացիությունը հաջողությամբ տիրապետում է տեխնիկային : Գյուղական յերիտասարդությունն ունի կրթություն ստանալու բոլոր հնարքավորությունները :

6. Յեկա, վերջապես, յուրաքանչյուր յերիտասարդի համար արմատական հարց եր կրթության հարցը, պրոֆեսիա ընտրելու հարցը, նրա ամբողջ հետազարաւակի համար :

Առաջ յերիտասարդները սովորաբար հետեւամ ելին իրենց ընտանիքի տրադիցիսներին . հաճախ սերնդեռ սերունդ անցնուամ եր միևնույն պրոֆեսիան :

Այժմ յերիտասարդությունը հնարավորություն ունի ստանալու վոչ միայն միջնակարգ, այլև բարձրադություն կրթություն, հնարավորություն ունի ընտրելու ուղած պրոֆեսիան, քանի վոր բոլոր պրոֆեսիաները մեր յերկուամ հավասարապես հարգանք ունեն: Խորհրդացին յերկրի յերիտասարդն ազատորեն ընտրում է պրոֆեսիա, բոլոր հնարավորություններն ունի հոգեկան ու Փիզիկական բազմակողմանի դարդացման համար :

Այս բոլոր հարցերն ել հենց կազմուամ են յերիտասարդության աշխատանքի ու կրթության այսպես կոչված արմատական հարցերը, և մեղ մոտ նրանք լրիվ չափով լուծված են:

Մեր յերիտասարդությանն իր կյանքի ներկայիս պայմանները թվում են սովորական ամենորյա յերեսոյթ. ուրիշ պայմաններ մեր յերիտասարդության մեծ մասը չի խմացել, չի տեսել: Իսկ մինչդեռ կապիտալիստական յերկիրների բանվոր և աշխատավոր յերիտասարդության համար այս բոլոր հարցերն ամենց հաստատ, կենսական հարցեր են, վորոնց շուրջը կատաղի պայքար ե մղվում :

Ինչո՞ւ մենք մեր ծրագրի մեջ վոչ մի արաջարկ չենք մտցնում յերիտասարդության աշխատանքի մասին: Ինչո՞ւ նոր ծրագրում բացակայում ե յերիտասարդության աշխատանքի բաժինը, ի տարբերություն

անցյալ ծրագրի, վորտեղ նա համարյա թե կենսորության տեղ եր բանում: Վորովհետեւ մեղ համար այս բոլոր հարցերն արդեն լուծված են, վորովհետեւ մենք կարիք չենք դում վորեե պահանջ առաջարկելու յեկարտագիր չարցերի վերաբեր բիտասարդության աշխատանքի հարցերի վերաբեր մամբ:

Կոմյերիտամիության նախկին միքանի՝ Շատկինի տիպի՝ ղեկավար աշխատողներ, յերիտասարդությունը որոցկիստորեն հակադրելով Խորհրդային պետությանը, ժամանակին հակամեա եյին կոմյերիտմիությանը մեծ յերախտիքներ վերագրելու յերիտասարդյանը մեծ յերախտիքները բարելավելու ասդության աշխատանքի պայմանները բարելավելու ասդության, աչքաթով անելով այն հանդամանքը, վոր ամենից առաջ կոմունիստական կուսակցության ղեկու ամենից առաջ կոմունիստական ինքն ե հոգ տակավարած Խորհրդային պետություններին ինքն ե հոգ տանում յերիտասարդության մասին, անելով ամեն անհրաժեշտ բան բարելավելու նրա նյութական ապահովությունն ու նրա կրթության պայմանները:

Յերիտասարդության, նրա աշխատանքի ու կրթության պայմանները բարելավելու հոգաւը, յերիտաների հոգաւական պետության բնորոշ առանձնություններ ե: Աշխատավոր յերիտասարդությունը գիտե, վոր խորհրդային իշխանության առաջնորդության իսկ քայլերը կապված եյին բանվոր յերիտասարդին ինդեպարտամենտների բարելավման դության աշխատանքի պայմանների արարելավման հերի բարելավման ինդեպարտամենտը լրիվ արտացոլված են

կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ծրագրությունը:

Ցես այստեղ պետք է հիշեցնեմ գեթ այսպիսի պատմական չափազանց կարեռու փաստ. 1917 թ. հոկտեմբերի 29-ին, այժմնքն իշխանությունը բանվորների և դյուդացիների ձեռքը վերցնելուց ուղիղ յերեք որ հետո, Ժողովրդական կոմիտարների Խորհուրդը հրատարակում է մի գեկրետ, վորով սահմանում է 8-ժամյա աշխատանքային որ ճեռնարկությունների բանվորների համար, արգելվում է գիշերն ուղտվել մինչև 16 տարեկան արական և խղական սեռի անչափահասների աշխատանքից, արգելվում է վարձու աշխատանքը մինչև 14 տարեկան դեռահասների համար. մինչև 18 տարեկան անչափահասների աշխատանքային որը սահմանադրակում է 6 ժամով:

Ահա տեսնում եք, թե ինչպես իշխանությունը վերցնելուց բառացի միքանի որ հետո, այն մոմենտին, յերբ ամենակատաղի կոխի եր մզվում իշխանությունն ամբացնելու համար, բանվորա-դյուդացիական կառավարությունն իր առաջին գեկրետներից մեկը նվիրում է բանվոր յերիտասարդության աշխատանքի պայմանների բարեկավմանը:

Հայրկավոր է իմանալ և խորապես գնահատել Խորհրդային պետության ամբողջ հոգատարությունը յերիտասարդության համար, մի հոգատարություն, վորոն այնպես ցայտուն արտահայտվել և նույնիսկ արդեն այս առաջին, կարեռապույն գեկրետի մեջ, վորը հսկայական նշանակություն ունի մեր կյանքի համար:

Յեվ կամ այնուհետև, ընկերնե՛ր, նոր տնտեսական քաղաքականությունը կիրառելիս, յերբ սպառնալիք կար, վոր շտաների կրծատման հետեւանքով ձեռնարկություններում առաջին հերթին կարող են կրծատման չափահասներն ու յերիտասարդությունը 1922 թ. հունիսին հրատարակում եմի հատուկ գեկրետ անշափահասների այսպես կոչված ըլոնյայի մասին, վորի վերաբերյալ շատ յերիտասարդ կոմյերիտականներ նույնիսկ գաղափար չունեն: Բայց հին կոմյերիտականներն այս պետք է հիշեն: (Զայնելը տեղերից. «Հիշո՞ւմ ենք, հիշո՞ւմ ենք, ինքներս ենք յեղել բրոնյայի մեջ»): Այս գեկրետը սահմանում եր, վոր արդյունաբերության բոլոր ճեռնարկություններում պետք է լինի անչափահապների պարտադիր նվազագույն տոկոսը բանվորների ընդհանուր թվի համեմ: Հայտնի յէ, վոր բրոնյայի որենքի կենսալործումը բավականաչափ լավացրեց բանվոր յերիտասարդության դրությունը:

Անող սերնդի առողջությունը պաշտպանելու նպատակով խորհրդային կառավարությունը 1922 թ. հոկտեմբերին սահմանեց այնպիսի կարգ, յերբ մինչև 18 տարեկան բոլոր անչափահաս բանվորներին թույլ տրվեց աշխատել միայն բժշկական քննության յինթարկվելուց հետո: Կառավարությունը սահմանեց անշափահաս բանվորների ամենամյա բժշկական քըննություն:

Նմանապես հայտնի յէն խորհրդային իշխանության միջոցառումները քաղաքացիական պատերազմի տարի-

ներին յերեխաների գրությունը բարելավելու համար : Խորչքային կառավարությունը սովոր այն ծանր ապրիներին, լարելով բոլոր ջանքերը, յերեխաների համար ազահովում եր հաց և կաթնամթերք, հաղուստ և կոչկեղեն :

Յեւ ել չեմ խոսում կուսակցության ու կառավարության բոլոր միջոցառումների մասին ընդհանուր պարագայիր ուսումն մտյնելու առաջարեղում, վորոնց նպատակին և մեր յերիտասարդ սերունդը դարձնել դրագետ սերունդ :

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, վոր խորչքային իշխանությանը հասուլ և անդադրում հոգածարությունը յերիտասարդության համար :

Յեթե կազիտալիստական հասարակության մեջ աշխատավոր յերիտասարդությունն այդ հասարակության ամենաիրավագուրի մասն և, ապա մեղ մոտ յերեխաներն ու յերիտասարդությունն ամբողջ սոցիալիստական հասարակության սուայելադույն ուշադրության, սիրո և հոգատարության առարկան են :

ԳԼԵԱՎԱՐՈՐ ԽՆԴԻՐԸ ԱՊՎՈՐԵԼՆ Ե

Ծրագիրն ամբողջ լայնությամբ դնում է յերիտասարդության կրթության, նրա քաղաքական և կուլտուրական դաստիարակության հարցերը, վորոնք, իտարբերություն անցյալ ծրագրի, ներկայումս կենտրոնական տեղ են գրավում նրա մեջ : Մեր ծրագիրը լրիդ և ամբողջությամբ յելնում է լենինի ցուցումներից, վորը մեղ սովորեցնում եր, վոր

«...յերիտասարդության խնդիրներն առհասարակ և կոմունիստական յերիտասարդության միությունների ու ամեն մի այլ կազմակերպությունների խնդիրները մասնավորապես, կարելի կլիներ արտահայտել մի խոսքով . խնդիրն այն է, վորպեսզի սովորեն... յերիտասարդության միությունը և ամբողջ յերիտասարդությունն առհասարակ, վորն ուղում և անցնել կոմունիզմին, պետք և սովորի կոմունիզմը» (XXX հ., Էջ 403—404) :

Զի յեղել լենինի մի յելույթ, ընկեր Ստալինի մի յելույթ յերիտասարդության մասին, վորտեղ այս խնդիրը չգրվի իրու զլատավոր, վճռական խնդիր յերիտասարդության կոմունիստական միության համար :

Կոմյերիտամիության VIII համագույմարում ընկեր Ստալինը Միության խնդիրների մասին ասաց :

«Տիրապետել գիտությանը, կովել բոլշևիկ-մասնագետների նոր կադրեր գիտությունների բոլոր նյույների ասպարեզում, սովորել, սովորել և ամենահամառ կերպով սովորել — այս է խլնդիրն այժմ : Հեղափոխական յերիտասարդության արշավ դեպի գիտություն — ահա թե ինչ է ոլեաք և մեղ այժմ, ընկերներ» (Ստալին, Ճառ Համլիցել Համամիութենական VIII համագույմարում, 1928 թ. մայիսի 16-ին : Տես «Լենինը և Ստալինը յերիտասարդության մասին» ժողով, ոսուս. Էջ 203, 1936 թ.) :

Իսկ այժմ այս ինդիքը գրված ե ե՛լ ավելի սուր կերպով։ Զե՞ վոր մենք թևակոփել ենք մեր յերկրի զարգացման այնպիսի շրջանը, յերբ հետագա առաջընթացը վճռվում է նոր տեխնիկային տիրապետած կաղըրի պատրաստումով, յերբ մեր յերկրում սկսվում է կուլտուր-տեխնիկական մի հզոր վերելք, վորը վերջին հաշվով համոդի մտավոր և Փիդիկարկան աշխատանքի սահմանի վերացման։

Իսկ ի՞նչ պետք է սովորենք մենք և սովորեցնենք յերիտասարդությանը։

Ամենից առաջ անհրաժեշտ է սովորել լենինիդմը, վորովհետև սա հիմնականն է յերիտասարդության կունիստական դաստիարակության մեջ։

Կադրերը վճռում են ամեն ինչ և պետք է վճռեն ինչպես շինարարության, արմագես ել յերկրի պաշտպանության գործում, այս պատճառով ել Միության կարերագույն խնդիրն է խելովոգիապես զինել այս կադրերը, սովորեցնել նրանց ըմբռնելու իրենց նպատակները, նրանց մեջ դաստիարակել մեր մեծ գործի ճշմարտության մեջ խորապես համոզված լինելու դրացմունքը։

Ի՞նչն ապահովեց մեր բանակի հաղթանակը ինտերվենտների, սպիտակ գվարդիականների և պրոլետարական դիկտատուրայի այլ թշնամիների գեմ մըղվող պայքարի տարիներին։ Կուսակցության ձիչա դեկադարությունը, ինչպես և, վոր առանձնապես կարենք, բոլոր մարտիկների կողմից իրենց դերի ըմբռնումը, խոր հավատն իրենց դործի նկատմամբ։

Ահա թե ինչու թշնամիները հաճախ զարմանում եյին, յեր կարմիր բանակի կիսամերկ, քաղցած մարտիկները ջարդուիչուր եյին անում շատ ավելի լավ զինված ու ավելի մեծաքանակ թշնամուն։

Գաղափարայնությունը, իրենց նպատակները հաստատագես իմանալը հիմք է տալիս իսկական արիության ու հերոսության համար, վորոնք սահման չեն ձանաչում։

Հենց այս հիման վրա յե, վոր մեր յերկրի առաջավոր մարդիկ և մասնավորագես յերիտասարդությունը ցույց են տալիս քաջության, խեղախության, աննկումության, տոկումության հրաշքներ։

Ահա թե ինչու ծրագիրն արյուղիսի սրությամբ դնում և քաղաքական դաստիարակության, հեղափոխական թերիան ուսումնասիրելու հարցը։

Յես պետք է հաղորդեմ, վոր յերիտասարդության քաղաքական դաստիարակության հարցում մենք ստացել ենք ընկեր Ստալինի չափազանց եյական ցուցումները։

Ծրագրի սկզբնական նախագծում սաված եր, վոր կոմյերիստմիությունը կազմակերպում և կուսակցության պատմության ուսումնասիրությունը և Մարքսի, Ենգելսի, Լենինի ու Ստալինի աշխատությունների ուսումնասիրությունը։

Բնիեր Ստալինն ուղղեց մեզ և մտցրեց հետեւյալ ձեակերպումը, վոր լրիվ ու ամբողջությամբ մտցված և ծրագրի հրապարակված նախագծի մեջ։

Համեկօնը «ստեղծում և դպրոցներ, իւրմ-

բակներ և իրականացնում ե այլ ձեռնարկումներ, վորպեսզի յերխոտասարդությունը յուրացնի քաղաքական զբագիտություն, ուսումնասիրի ընդհանրապես պատմության, և մանավանդ ԽՍՀՄ և Համամիութենական կոմունիստական կուսակցության պատմության հիմնական մոմենտները, կազմակերպում ե Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի հիմնական գաղափարների ուսումնասիրումը յերխոտասարդության կողմից»:

Դուք տեսնում եք, վոր այս ուղղութը շատ երական ե: ԶԵ՞ վոր իրոք կրթված և կուլտուրական մարդ լինելու համար հարկավոր է ուսումնասիրել վոչ միայն ՀամԿ(բ)Կ պատմությունը դասադրքով, այլև հարկավոր ե իմանալ առհասարակ պատմության և մասնավորապես ԽՍՀՄ պատմության հիմնական մոմենտները: Այս ել հենց մտցված ե ծրագրի վերը մեջբերված կետի մեջ: Այս կետի վերջում առաջ ընդհանուր ձևակերպում կար Մարքսի, Ենգենինի և Ստալինի բոլոր աշխատությաններն ուսումնասիրութեարերան, վորն այժմ փոխարինված ե ընկեր Ստալինի այն կոմկրետ ցուցումով, վոր ՀամԼԿՅԵՄ կազմակերպում ե յերխոտասարդության կողմից Մարքսի—Ենգելսի—Լենինի—Ստալինի հիմնական գաղափարների ուսումնասիրությունը:

Մեր կազմակերպության մեջ գտնվող յերխոտասարդությունը պետք ե ստանա կոմունիստական ճիշտ դաստիարակություն, պետք ե իր մեջ մշակի մարքսիստական-լենինյան աշխարհայացք: Այս պատճա-

ռով ել մեր ծրագրում ասված ե, վոր յուրաքանչյուր կոմյերխոտական պարտավոր ե քաղաքական կրթություն առանձ: Բայց յես կուզելի ընկերներին նուխաղուցացնել այս կետի հնարավոր սիսալ մեկնաբանությունից: Մենք կոմյերխոտական քիչ աշխատողներ չունենք՝ վրոշ բյուրոկրատական չորչովով: Նրանք կարող են առել. «Մենք վաղուց ենք առաջարկել գրանցել մի կետ, վոր քաղաքական կրթությունը պարտադիր ե կոմյերխոտականների համար: Այ հիմա մենք արդեն պահանջենում կլինենք կոմյերխոտականների նկատմամբ: Նրանց, ովքեր չեն կատարի կոմյերխումիության ծրագրի այս կետը, «ձեռաց» գուման կը ենք կազմակերպությունից»: Ընկերներ, հարկավոր ե հաշվի առնել, վոր յեթե մենք քաղաքական կրթությունը համարում ենք պարտադիր, ապա այս չի նշանակում, թե այս խնդիրը մենք կարող ենք լուծել վարչական միջոցներով: Հարկավոր ե, վոր կոմյերխոտականներն ամենից առաջ ըմբռնեն քաղաքական կրթության անհրաժեշտությունը: Հարկավոր ե ճիշտ կազմակերպել քաղաքական կրթությունը, այն ժամանակ մենք հաջողություն ձեռք կրերնք:

Մեր յերխոտասարդությունը յերջանիկ կյանք է վայելում: Նա հնձում ե այն պտուղները, վոր ձեռք են բերված Պրոլետարական մեծ հերավորխություն կատարած պրոլետարիատի ալագ սերունդների ձեռքով: Նրա համար յերջանիկություն ե այն հանգամանքը, վոր նա չի տեսել կապիտալիստական անցյալի սարսափները և դաստիարակվում ե մեր սոցիալիստական:

սղայմաններում : Բայց սրա հետ միասին այս հանդամանքը նրա թուլությունն է : Իրենց վրա կրած չլինելով կապիտալիզմի բոլոր սարսափները, և պայքարի ամբողջ ծանրությունը, յերիտասարդության առանձին խմբեր դուրս են գալիս անբավարար կոփիած և յերեմն հայտաբերում են անկայտնություն : Ահա յերիտասարդության այս առանձին անկայուն խմբերը կարող են հող հանդիսանալ թշնամական աղբեցությունների և տրամադրությունների համար :

Մենք չպետք են մոռանանք, թե վորպիսի դժվարություններով և բանվոր գասակարգը հաղթանակ ձեռք բերել : Ահա թե ինչու ՀամԼԿՅԵՄ ծրագիրը հարց ե դնում մեր յերկրի անցյալն ուսումնասիրելու ժամանք, բանվորների և գյուղացիների անցյանը ուսումնասիրելու մասին, համարներելու մասին, հեղափոխական պայքարի, քաղաքացիական պատերազմի պատմության ուսումնասիրության մասին : ՈՒԿՅԵՄ III համագումարում լենինն ասել ե :

«Յերբ մարդիկ տեսում են, թե ինչպես իրենց հայրերն ու մայրերն առըսում են կալվածատերերի ու կապիտալիտների ճնշման տակ, յերբ նրանք իրենք են մասնակցում այն տանջանքներին, վոր թափվում են նրանց վրա, ովքեր սկսում են պայքարել չահագործողների դիմ, յերբ նրանք տեսնում են, թե ինչ զոհեր են նրատում այս պայքարի չարումնակումը՝ նվաճվածը պաշտպանելու համար, ինչ կատաղի թշնամիներ են կալվածատերերն ու կապիտալիտները, —

այն ժամանակ այդ ժարդիկ այս միջավայրում դաստիարակվում են իբրև կոմունիստներ» (XXX հ., էջ 413) :

Մեր յերիտասարդությունն իր ճնշող մեծամասնությամբ չի տեսել և չի կրել այս բոլորը : Հենց այս պատճառով ել առանձնապես կարևոր են նրա համար ինչպես հարկն ե ուսումնասիրել մեր յերկրի բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության հերոսական պայքարի պատմությունը :

Մենք պետք են մեր յերիտասարդությանը դաստիարակենք պրոլետարիան ինտերնացիոնալիզմի վորով, վորպեսզի «ինտերնացիոնալիզմի վորին մշտապես սպառնի կոմյերիտամիության վրա» (Ստալին) : Կոմյերիտամիությունը, վոր համախմբում ե զանազան ազգությունների յերիտասարդությանը, մի բան, վոր առանձնապես ցայտում ե յերեւում այս համագումարությունը, ինտերնացիոնալ կազմակերպության տիպարն ե :

Ամբողջ հարցն այն ե, վոր համառ դաստիարակչական աշխատանք կատարենք, արմատախիլ անելով անցյալի անիծյալ մնացորդների բոլոր արտահայտությունները :

ՀԱՐԿԱՎՈՐ ԵՆ ԲՈԼՇԵՎԻԿ-ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԿԱՂԲԵՐ

Ընկեր Ստալինը մեկից ավելի անդամ և նախադպությացը յերիտասարդությանն ամենաղիտությունից ու զիկուտանտությունից, նշելով, վոր անհրաժեշտ է կատարելությամբ այլբարետել մի վորեւ մասնազի-

տության: Մեզնից վոմանք այժմ ել կարծում են, վոր կարելի յե ապրել այն յերիտասարդների ակզբունքով, վորոնց մասին դեռևս Պուշկինն է ասել. «Մենք բոլորս սովորել ենք կամաց-կամաց, մի վորեւ քան և մի վորեւ կերպ»:

Ամենագիտությունը, մի պրոֆեսիայից մյուսին թուջոտելը, մակերեսային ծանոթությունը գիտության հետ՝ սա մեր ամենակատաղի թշնամին է: Իսկական կոմունիստ կարելի յե զատնալ միայն յուրացնելով մարդկության կուտակած ամբողջ կուլտուրական հարատությունները: Ահա թե ինչու ծրագրի մեջ մի հատուկ կետ է մտցվում ամենագիտության և դիլետանտության դեմ պայքարելու վերաբերյալ:

Ահա թե ինչու մենք կոմյերիտամիության ուշադրությունը կենտրոնացնում ենք դպրոցների ամրացման ու զարգացման աշխատանքի վրա, ամբողջ լայնությամբ հարց ենք դնում պայքարել ամբողջ յերիտասարդության համար միջնակարգ կրթություն ձեռք բերելու, կոմյերիտականների կողմից մաթեմատիկան, Փիզիկան, Քիմիան, տեխնիկան, ուսումնառությունը, աշխարհագրությունը, ոստար լեզուներն ուսումնասիրելու մասին:

Կոմյերիտամիության ծրագրում մի հատուկ կետ կա անդրագիտության վերացման մասին: Մեզ կարող են հարց տալ, թե արդյոք իսկական այս ինդիքն արդքան սուր ե և ակտուալ, վորպեսզի կոմյերիտամիության ծրագրի մեջ հատուկ կետ մտցվի անդրագիտության և կիսագրագիտության վերացման մա-

սին: Թույլ տովեք, ընկերներ, մեջ բերել թվեր, վորոնք ամբենից ցայտուն կերպով ցույց կտան այս ինդիքի կարեւությունը:

1936 թ. արդյունաբերության չորս ճյուղերում (մեքենաշինություն, ուև մետաղների մետալուրգիա, քարածխի և տեքստիլ) կար 1% անդրագետ յերիտասարդություն (ամբողջ յերիտասարդության հանդեպ), 20,7% կիսագրագետներ, վորոնք չեն ավարտել արարական դպրոցը, 41,4% տարրական կրթությամբ, 34,6% թերի միջնակարգ կրթությամբ, 2,3% միջնակարգ կրթությամբ:

Մեր առջև իննդիր ե գրված բանելոր յերիտասարդության գիտելիքների մակարդակը բարձրացնել-հասցնել մինչև ճարտարագետական - տեխնիկական աշխատաղողների մակարդակին: Սրա միակ ճանապարհն է յերիտասարդ սերնդին տալ ընդհանուր միջնակարգ և տեխնիկական կրթություն:

Հիշատակված թվերը ցույց են տալիս, թե մենք դեռ վորքան պետք ե աշխատենք, վորպեսզի կատարենք այս իննդիրը: Բայց այս իննդիրն անհետաձգելի յե: Յել մենք պետք ե կատարենք այն: Մենք չենք կարող հանդուրժել, վոր խորհրդային յերիտասարդության մեջ լինեն անդրագետ և կիսագրագետ մարդեկ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍՏՐԱԿՈՒ-
ԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ

Զեզ առաջարկված ծրագրի նախագծում ասված է . «ՀամԼԿՅՅԵՄ ողնում և բոլշևիկների կուսակցության ու Խորհրդային կառավարությանն իրականացնելու պատմական մեծ խնդիրը՝ կոմունիստական հասարակության կառավարուցում» :

Այս նշանակում է, վոր կոմյերիտմիության և ԽՍՀՄ ամբողջ աշխատավոր յերիտասարդության կարևորագույն խնդիրն է զործնական մասնակցություն ցույց տալ կոմունիստական հասարակության ստեղծման պայքարին :

II Խոսերնացիոնալի ոպորտունիստական կուսակցությունները մշտապես ձգտել են յերիտասարդության ակտիվությունն ու նրա հեղափոխական ձգտումները ներփակել կրթական աշխատանքի և այսպես կոչված «մաքուր կուլտուրայի» ներ զրչանակների մեջ, բանվոր յերիտասարդությանը հետ պահելով քաղաքական կյանքին մասնակցելուց : Նրանց նպաստակն եր յերիտասարդության ուշադրությունը հետ պահել գտառկարգային պայքարից, յերիտասարդությանը լրիվ ու ամբողջությամբ յենթարկելով իրենց շահերին :

Ենինը և Ստալինը մշտապես սովորեցրել են մեզ, վոր յերիտասարդության կոմունիստական զաստիարակությունն անկարելի յե առանց նրան զործնական պայքարի մեջ ներդրավելու:

Ենինն ասում եր, վոր յերիտասարդությունն իր

ուսման, դաստիարակության, կրթության ամեն մի քայլը սետք է միացնի շահագործողների դեմ բոլոր աշխատավորների ընդհանուր պայքարին մասնակցելու հետ :

Ենինյան կոմյերիտմիության ամբողջ աշխատանքը հաստատեց այս գրույթի ճշությունը : Մասնակցելով քաղաքացիական սպատերազմին, ողնելով կուսակցությանն ու խորհրդային իշխանությանը բարձրացնելու խմբերիալիստական սպատերազմից քայլայմած տնօսեսությունը, մասնակցելով կուսանեսությունների, զործարանների, Փարբիկանների, յերկաթուղիների շինարարությանը, ամենուրեք ցուցաբերելով իր նախաձեռնությունն ու ձեռներեցությունը, կաղմագերազելով սոցիալիստական մրցություն, ամենուրեք պայքար մղելով դասակարգային թշնամութեմ, այսպիսով, իր ուսուցումը շաղկապելով աշխատավորների ընդհանուր պայքարին մասնակցելու հետ, ՀամԼԿՅՅԵՄ բարձրացրեց իր դերն իրեկ յերիտասարդության կոմունիստական դաստիարակության կազմակերպություն :

Յերիտասարդությունը պետք է հաստատապես իմանա այն բոլոր խնդիրները, վոր նրա առջե դնում են Խորհրդային կառավարությունն ու ՀամԿ(ր)Կ՝ կոմունիստական հասարակակարգը կառուցելիս : Խորհրդային յերիտասարդության դաստիարակության տեսակետից սխալ կլիներ, յեթե նրա մեջ այժմ ստեղծվեր այն պատկերացումը, թե վաղուց արդեն անցել ենք բոլոր դժվարություններն ու վտանգները և

վոր մեր առջև ընկած եւ ուղիղ դեպի կոմունիզմ տանող հարթ ու խաղաղ ճանապարհ :

Իհարկէ, սոցիալիզմի կառուցման բոլոր արմատական հարցերը մեղ մոտ լուծված են: Բայց սա ամենակին չի նշանակում, թե բոլոր վտանգներն արդեն անցել են, և ուստի, ինչպես պատկերավոր կերպով արտահայտվեց ընկեր Ստալինը կուսակցության XVII համագումարում, «կարելի յի զենքը վայր դնել և պառկել-քնել՝ սպասելով անդասակարգ հասարակության գալստյան»:

Մենք ապրում եւ աշխատում ենք կապիտալիստական ողակման պայմաններում: Կապիտալիզմի մնացորդները դեռևս չառ կենսունակ են և մեր իրականության ամեն մի քայլափոխում իրենց զգալ են տալիս: Սրա հետ միասին հարկավոր ե նկատի ունենալ կապիտալիզմի մնացորդների առանձին կենսունակությունը մարդկանց զիտակցության մեջ, վորովհետեւ հայտնի յի, վոր մարդկանց զիտակցությունն իր դարձացման մեջ առայժմ հետ և մնում նրանց տնտեսական դրությունից:

Ծրագիրն առանձին ործով ընդգծում է կոմիզիտմիության խնդիրները սոցիալիստական սեփականությունն ամրացնելու, աշխատանքի հանդեպ սոցիստական վերաբերմունք զարգացնելու, կուսակցության ու Խորհրդային կառավարությանն ողնելու հոգատառության այն գործում, վոր նրանք ցուցաբերում են աշխատավորների՝ կանանց ու յերեխաների նկատմամբ:

Ծրագիրն ուշադրությունը կենտրոնացնում է այս բոլոր հարցերի վրա, վորովհետեւ նրանք վճռական հարցեր են սոցիալիզմի վիակատար հաղթանակի համար և վորովհետեւ այստեղ կապիտալիզմի մնացորդները մարդկանց գլխակցության մեջ ավելի յեն դժվար տալիս իրենց մասին, քան մեր կյանքի վորևէ այլ սովորեղում:

ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՈՒՄԸ

Բուրժուազիայի քարոզի ամենահիմնական կետն եր «սրբազն» մասնավոր սեփականության պաշտպանությունը: Բուրժուազիան վախ եր դաստիարակում կապիտալիզմի այս սրբության հանդեպ: Իսկ հասարակական սեփականությանը բուրժուազիան վերաբերվում եր իրեւ հարստացման ձրի աղբյուրի: Առաջ հաճախ եր լսվում՝ սա «կազյոննի» յե — կնշանակի սա վոչլոքի յե, սա կարելի յե անպատճի կերպով քարչ տալ կամ փչացնել: «Կազյոննի» գույքը համանիշ եր անտեր գույքին: Շահագործողական աշխարհը ծնում եր այնպիսի մարդիկ, վորոնք ընդունակ եյին «անտեղի», ինչպես Պոմյալովսկու սեմինարիստները, փչացնելու հասարակական գույքը:

ԽՍՀՄ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը վերացրեց մասնավոր սեփականությունը և ստեղծեց սոցիալիստական հանրային սեփականություն, վորը դարձավ խորհրդային հասարակակարգի հիմքը: Բայց կապիտալիզմի մնացորդները դեռ հազ-

վաղեալ չեն իրենց զբալ տալիս : Թշնամին ճգուռմ և
խախտել խորհրդային հասարակակարգի համքը, հա-
վըտակելով ու փչացնելով սոցիալստական գույքը :

Հանրային գույքի հանդեպ ճիշտ վերաբերմունք
դաստիարակելու միջոցով ստեղծվում է անցյալի
մնացորդներից ազատ մարդու խոկական նոր բնակո-
րությունը :

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄԸ

Ազնիվ աշխատանքի բարձր արտա-
դրողականություն — ահա թե վերջին հաշվով ինչը
պետք է մեղ տա սոցիալիզմի կատարյալ հաղթանակ
և այն, ինչ անհրաժեշտ է կոմունիստական հասարա-
կության անցնելու համար : Այնինչ կազմակերպությունի
մնացորդները զեռևս բավական հաճախ իրենց զգաւ
են տալիս նաև աշխատանքին վերաբերմունք :

Պարագիսովիմն ու պնակալեզությունը բուրժուա-
զիան բարձրացրել և դասել է մարդկային առաքինու-
թյունների շարքը : Այս, իհարկե, բացահայտորեն չի-
յին խոստովանում, բայց փաստորեն այս այսպես եր :
Եղուր չեն գոյություն ունեցել այնպիսի առածներ,
ինչես, որ ., «Աշխատանքը հիմարներին է սիրում»,
«Աշխատանքը գայլ չե—անտառ չի փախչի» : Մրանում
արտահայտվում եր մեծամիտ արհամարհական վերա-
բերմունքը դեպի աշխատանքը : Անբանների ու պարա-
գիսների ամբողջ սերունդներ ե դաստիարակել բուր-
ժուազիան դարեղար :

Աշխատանքը մեր հասարակության բարեկեցության

չիմքն և : «Աշխատանքն ստեղծում է արժեքներ, վո-
րոնք սլատկանում են այս հասարակության բոլոր աշ-
խատավորներին : Սոցիալստական ազատ աշխատան-
իստավորները դաստիարակում է մարդկանց : Մեր հասարակու-
թյան մեջ աշխատանքը վերադաստիարակում է նույն-
իսկ այնպիսի մարդկանց, վորոնք առաջ յեղեւ են վոհ-
արգործներ : Ազնիվ, բարեկսիղճ աշխատանքը հաղթա-
նակած սոցիալիզմի յերկրում մի ճանապարհ և դեպի
ամբողջ ժողովրդի ազատումը կենսական բոլոր
բարիքներով :

Մտախանովյան շարժումը, վոր անորինակ բարձ-
րության և հասցնում աշխատանքի արտադրողականու-
թյունը, մարդկանց դեսպի աշխատանքը նոր սոցիա-
լստական ձեռվ վերաբերմունք ամենացայտուն ար-
տահայտությունն ե :

Աշխատանքի նկատմամբ սոցիալստական վերա-
բերմունք դաստիարակելը կոմյերիտոմիության կա-
րելուագույն խնդիրն ե :

«Հարկավոր ե, — սովորեցնում եր մեղ Լե-
նինը, — վոր կոմունիստական յերիտասարդա-
կան միությունը բոլորովին մատաղ հասակից,
տաներկու տարեկանից, դաստիարակվի դիտակ-
ցական և կարգապահ աշխատանքի վողով»
(XXX հ., եջ 417) :

Մրանից և յեկուամ մեր ծրագիրը, առաջարկելով
լայնորեն գարգացնել սոցիալստական մրցությունն ու
գարվածայնությունը, ամբողջ լայնությամբ դնելով

ավատանքի նկատմամբ սոցիալիստական վերաբեր-
մունք դաստիարակելու հարցը:

Յերբ մենք խոսում ենք այն մասին, թե ինչպիսին
պիտի լինի կոմյերիտականը, մենք ամենից առաջ ու-
զում ենք, վոր նա լինի իր բնագալառում որինակելի
աշխատող մարդ: Կոմյերիտականներն ու կոմյերիտու-
հները, վորոնք աշխատում են ֆարբիկայում, հիմ-
նարկում, մեր յերկրի վորևե կազմակերպության
մեջ, միշտ և ամենուրեք պետք է հանդիմանան աշ-
խատանքին բարեխիլճ վերաբերմունք ցույց տվողի
որինակ, միայբարեն իրենց աշխատանքի բարձր վորա-
կի համար:

Կոմյերիտմիության անդամը հարգում է իր և ու-
րիշների աշխատանքը: Կոմյերիտմիության անդամը
պետք է դաստիարակիլի ատելության ու արհամար-
հանքի վորով դեպի պարագիտիզմը, ատելության վո-
րով դեպի ծովությունն ու պարապությունը՝ աշխա-
տանքին կազիտալիստական վերաբերմունք ցույց տա-
լու այս բոլոր մնացրդները: Իրենց բոլոր ուժերն ու
գիտելիքները նվիրելով կոմունիստական հասարակու-
թյան համար պայքարելու ընդհանուր գործին, կոմյե-
րիտականները դաստիարակիլում են դիտակցական,
սոցիալիստական կարգապահության վորով:

Կոմյերիտմիության անդամն իր վարքով՝ աշխա-
տանքային կարգապահության որինակ պիտի ցույց
տա աշխատանքի մեջ, մարտական կարգապահության
որինակ՝ չարքի մեջ, կազմակերպվածության ու կար-

գաղահության որինակ՝ կոմյերիտմիության մեջ և
կենցաղում:

Այս առնչությամբ յես ձեր հասուկ ուշագրու-
թյունն եմ հրամիրում ծրագրի հետեւալ կետի վրա.

«Խորհրդային իշխանությունն արմատացնում
է կարգապահությունն, հարգանք դեպի սոցիա-
լիստական որենքներն ու համակեցության կանոն-
ները, բոլոր աշխատավորների մեջ դաստիարա-
կում և աղնիլ վերաբերմունք դեպի աշխատանքն
ու հասարակական պարագը, առանց վորի չի
կարող իրականանալ սոցիալիզմի լինիտար
հաղթանակը»:

Հետեւարար, մեր ինդիբն և ամբողջ յերիտասար-
գության մեջ գաստիարակել աղնիլ վերաբերմունք
դեպի աշխատանքն ու հասարակական պարագը, հար-
գանք դեպի սոցիալիստական որենքներն ու համակե-
ցության կանոնները: Սա չափազանց մեծ նշանակու-
թյուն ունեցող խնդիր է:

Հայտնի յե, վոր Լենինը սոցիալիզմից կոմունիզ-
մին անցնելը կալում եր վոչ միայն արտադրողական
ուժերի վարդացման, այլև այն բանի հետ, վոր մար-
դիկ աստիճանաբար կսովորեն պահպանել համակեցու-
թյան հիմնական կանոններն առանց պետական հարկա-
դրանքի:

«...Սոցիալիզմը կվերաճի կոմունիզմի... վո-
րովհետեւ մարդիկ կսովորեն պահպանել հաս-
րակայնության տարրական պայմաններն առանց

բոնության և առանց հարկադրանքի» (XXII հ.՝
Հայ. եջ 693) :

«... աղասված կապիտալիստական ստրկու-
թյունից, կապիտալիստական չահագործման ան-
համար սարսափներից, վայրենություններից,
անհեթեթություններից, գաղցելիություններից,
մարդիկ աստիճանաբարը կլարժվեն պահպանել
համակեցության դարերով հայտնի, բոլոր ո-
րենսդրելում հազարամյակներով կրկնվող, տար-
րական կանոնները, պահպանել առանց բոնու-
թյան, առանց հարկադրանքի, առանց յենթարկ-
ման. . .» (XXI հ., եջ 431) :

Սոցիալիզմից կոմունիզմին անցնելը, ինչպես մեղ-
սովորեցնում են Լենինն ու Ստալինը, կարող ե իրա-
կանացվել միայն այն ժամանակ, յերբ վիթխարիչ չա-
փերով կածի աշխատանքի արտադրողականությունը,
յերբ բոլոր աշխատադների կուլտուրական – տեխնիկա-
կան մակարդակը կրաքանակ մինչև ճարտարապե-
տական – տեխնիկական աշխատադների մակարդակը,
յերբ բարեխիղմ վերաբերումը դեպի աշխատանքը,
դեպի իր հասարակական պարտքը մարդկանց մեջ
սովորություն կդադանա, կմտնի նրանց մսի ու արյան
մեջ:

Կապիտալիզմի ժամանակ աղնվության, բարեխու-
ճառության վերաբերյալ բոլոր խոսակցությունները մի-
ջոց ելին մասսաներին հիմարացնելու համար: Նա յեր-
բարձրանում բարեկեցության դադարի, ով չեր կաշ-
կանդվում միջոցների ընտրությամբ և առաջնորդվում

էր հարստացման անգուստ ծարավով միայն: Ժողո-
վը լրական առածն իդուք չեր ասում՝ «Հարալ աշխա-
տանքով պալատ չի շնովի»:

Սոցիալիստական հասարակության մեջ հարգանք
ու պատիվ ե վայելում միայն նա, ով այդ վաստա-
կել ե աղնիվ վերաբերմունքով դեպի աշխատանքը և
համարակական պարտքը: Այսաեղ առաջին անգամն ե,
վոր աղնվությունը, բարեկազմությունը, գաղափարաւո-
ւությունը դառնում են աշխատավորների միլիոնավոր
մասսաների հատկանիշներ: Ազնվորեն աշխատել,
խնայել հանրային բարիքը, իր անձնական շահերը
բարձր չդասել հասարակության շահերից—ահավասիկ
մարդկային համակեցության տարրական կանոնները,
վորոնց պահպանումը սպառություն կդառնա սոցիա-
լիստական հասարակության բոլոր մարդկանց մեջ:

Ահա թե ինչու կոմյերիտմիությունը իր ծրագրում
այնպես լայն կերպով ե զնում հակածողովրդական
աղղեցությունների դեմ պայքարելու խնդիրները:
Յերբ մենք խոսում ենք հակաժողովրդական աղղե-
ցությունների մասին, մենք նկատի ունենք այն ամե-
նը, ինչ հակառակ ե զնում մեր համակեցության կա-
նոններին, այն ամենը, ինչ խանդարում ե մարդկային
համակեցության՝ սոցիալիզմի համար ամհրաժեշտ

կանոններն ստեղծելուն:

Վերսիթետների Կոնֆերանսը ՅԵՎ. ՅԵՐԵԱՆԵՐԻՆ

Բուրժուական բարոյականության նողկալիությունն
ու կեղծությունն ամենից ավելի արտահայտվել են

դեպի կինն ունեցած վերաբերմունքի մեջ։ Այս ըանը
նույնիսկ արտահայտված է ժողովրդական մի ամբողջ
չարք ասացլածքների մեջ։ «Կնոջը ծեծես—ճաշդ ել
համով կլինի», «Կնոջը ծեծիր մինչ յերեխա ունենալը»,
իսկ յերեխաներին՝ մինչև մարդ դառնալը», «Կնոջը
ծեծիր ճաշին, իսկ ընթրիքին կրկին, առանց ծեծելու
սեղան մի նստիր»։ Այսպես-եր հնչում հին կալվածա-
տիրական-բուրժուական մուսաստանի գերիմաստու-
թյունը։

Վոչ վոք հոգ չեր տանում կանանց կրթության
մասին։ Իզուր չեր հին ժամանակների վաճառականնե-
սուում։ «Աղջկեներին ինչ։ Աղջկեներին կարելի յե-
փակել, և նրանց գլխացալանքն ել քիչ և — վոչ սո-
վորեցնել, վոչ բան»։

Զի կարելի ասել, վոր այս բոլորը վերաբերիլեր
միայն հեռավոր անցյալին։ Հայտնի յե, վոր այժմ ել
կաղխոտական յերկիրներում ֆաշիզմը կնոջ հան-
գեղ արմատացնում և այնպիսի վերաբերմունք, ինչ-
պես ստրկուհու հանգեղ, սինդում ե, վոր կնոջ բա-
ժինն են հանդիսանում յերեխաները, ամուսինն ու յե-
կեղեցին։

Ամբողջ աշխարհին հայտնի յեն խորհրդային իշ-
խանության և կոմունիստական կուսակցության միջո-
ցառումները, վորոնք ազատագրել են աշխատավոր
կանանց, վոչնչացրել են կանանց ստրկական կախու-
մը, սահմանել են կնոջ և տղամարդու փաստական հա-
վասարություն վոչ միայն քաղաքում, այլև դյու-
դում։

Մենք հիմնահատակ կործանել ենք բուրժու-
ական հին ընտանիքը՝ հիմնված կապկտալի, մասնա-
վոր չահի վրա։ Մեր յերիտասարդությունը նույնիսկ
դաղափար չունի ամուսնության հին, մինչհեղափոխա-
կան ձեւերի — «հաշվով» ամուսնության մասին իբ-
րամնիսումափելի ուղեկիցներով հանդերձ՝ հարսնախոս-
ներով, ամուսնական հայտարարություններով լրա-
գիրելում և ամուսնալուծության վայրագ պլոցեմեն-
թյուն։

Բայց բուրժուական բարյականության մնացորդ-
ները գեռես գոյություն ունեն նաև այս բնազմա-
սում։ Քիչ վաստեր չեն հայտնի գևոլի կլնը, ընտա-
նիքը, յերեխաների դաստիարակությունը սիսալ, թե-
թևամիտ վերաբերմունք ցույց տալու մասին։

Այդ պատճառով ել ծրագիրը պահանջում է կոմյե-
րիտմիությունից ամեն կերպ ողնել կուսակցությանն-
ու կառավարությանը աշխատավոր կանանց և յերե-
խաների գաստիարակության վերաբերյալ նրանց հո-
գատարության մեջ։

ԿՐՈՆԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բուրժուական դաղափարախոսության մնացորդ-
ներն իրենց արտահայտությունն են գտնում նաև կրո-
նական սննդիակացառությունների ու նախապաշտ-
մունքների մեջ։

Իհարկե, մեր յերկրում հիմնավորական կտրված-
են կրոնի արմատները, և մեր յերիտասարդության,

մեր յերեխաների ճնշող մասն աճում և աճեն մի կրո-
նական աղքեցությունից զերծ :

Բայց սիսալ կլիներ կարծել, թե պայքարը կրոնա-
կան նախապաշտությունների դեմ վերջացած է, այս
թվում նաև յերիտասարդության մեջ։ Մի կոմյերի-
տուհի Մոռկվայի մարդից նամակ է դրել, վորտեղ
առում է .

«Ի՞նչո՞ւ պետք է ծրագրում դրել, վոր Համ.
Ակօթե՛ համբերատար կերպով պարզաբանում է
յերիտասարդությանը սնոտիապաշտության ու
կրոնական նախապաշտությունների վնասը։ Զե՞
վոր յերիտասարդության մեջ վաղուց արդեն
չկան հավատացյալ մարդիկ» :

Այսպես մտածող մարդիկ իրավացի չեն։ Ընկեր-
ներ, նայեցեք ձեր շուրջը, ներս մտեք հանրակացա-
րանները, ավելի լավ դիտեցեք յերիտասարդության
կյանքը։ Դուք կտեսնեք, վոր թե՛ քաղաքում և թե՛
դյուքում գեռևս կա յերիտասարդության մի, թեև
անհշան, մաս, վորը մինչեւ վերջ չի աղատվել կրոնա-
կան թմբերից։ Մենք պետք են համբերատար պարզա-
բանման աշխատանք կատարենք, վորպեսզի լրիշ՝ չսո-
վով հաղթահարենք կրոնական նախապաշտությունը։

Մեր ծրագրի սկզբնական նախադում դրված եր.
Կոմյերիտմիությունը վճռապես, անողոք կերպով
պայքարում են կրոնական նախապաշտությունների
դեմ :

Ընկեր Ստալինը նշեց. ի՞նչո՞ւ դրել «Վճռապես»,

«անողոք կերպով»։ Այս չե բանը։ Համբերատար
կերպով պետք է պարզաբանել յերիտասարդությանը
կրոնական նախապաշտությունների վնասը, յերիտա-
սարդության մեջ վարել մատերիալիստական աշխար-
հացացքի՝ միակ գիտական աշխարհացացքի՝ պրոպա-
գանդ։

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արդեն այժմ կազմվում են նոր, կոմունիստական
բարոյականության հիմքերը, կենցաղի մեջ են մտնում
համակեցության սոցիալիստական կանոնները։

17—18 տարի սրանից առաջ ծնված ԽՍՀՄ յերիտա-
սարդությունը գաղափար չունի կապիտալիզմի դայլի
որենքների սարսափելի ուժի մասին, վորոնք սարկաց-
նում են աշխատավոր մարդկանց, ջախջախում կյանքի
կովի համար անքավարձար պատրաստված բոլոր թույ-
լիրին։

Կապիտալիզմն իր գիշատիչ շահերի համար աշխա-
տավորների մեջ զատարակում եր սարսափի ու
սարկական հնագանգման զգացմունք դեպի իր որենք-
ները, դեպի մասնավոր սեփականության իրավունքը։

Սոցիալիզմի պայմաններում ապրող, կապիտալի-
տական անցյալի սարսափներից աղատված մեր սերնդի
համար չի խանդարում գաղափար ունենալ բուրժուա-
կան հասարակության բարքերի մասին։

Այս բարքերի սքանչելի բնութագիրը տվել ե ոռու
մեծագույն հեղափոխական-մտածողներից մեկը՝ քրն-

նաղատ Դոբրուլյուլուսովն իր «Խալխար թաղավորություն»
Հողմածություն։ Նա գրել է.

«Հանդիմանության ու քոթակի յերկյուղի
տակ, ստրկորեն դաստիարակված, — անդադա-
րում յերկյուղ ունենալով մնալու առանց մի
կտոր հացի, ստրկարար ապրող, — նրանք իրենց
բոլոր ուժերը լարում են ձեռք բերելու ստրկա-
րական գլխավոր առաքինություններից մեկը՝ ան-
խիղձ խորամանկությունը։ Յեկ ինչից խղճա-
հարվեն, ի՞նչ ձշմարտություն, ի՞նչ իրավունք-
ներ հարգեն նրանք։ Զե՞ վոր ինությունն իշ-
խում ե նրանց վրա, ճնշում ու սպանում ե
նրանց միանդամայն անիրավացի, անիմաստ,
անիրիղ կերպով։ Այսպիսի տիրակալության
տակ դաստիարակված մարդկանց մեջ չեն կարող
զարգանալ բարյական պարտքի գիտակցությու-
նը և աղնվության ու իրավունքի խական սկզբ-
րունքները։ Ահա թե ինչու ամենախայտառակ-
որիկայությունը նրանց թվում ե գովելի հերո-
սություն, ամենալավիրշ խարեյությունը՝ ճար-
պիկ բան։ Նրանք կարող են ձեզ խարել, կողոպ-
տել, գանակով հարձակվել ձեզ վրա, և այս բո-
լորի գեղքում անկեղծորեն ուրախ ու սիրալիր-
մնալ ձեզ հետ, աղաճանել անվրդով բարեսը-
տություն ու շատ խակական առաքինի հատկու-
թյուններ։ Նրանց բնավորության մեջ ամենենին
չարություն չկա, չկա նաև ուխտաղբժժություն-
բայց նրանց հարկավոր ե մի կերպ գուրս

դալ, գուրս պրծնել նեխված ճահճից, վորի մեջ
նրանց ընկղմել են ուժեղ խերը. նրանք դիտեն,
վոր թարմ ողի մեջ, վոր այնպես աղատորեն
չնչում են այդ խերը, կարելի յե դուրս պրծնել
խարեյության և փողի միջոցով, և ահա նրանք
ակտում են խորամանկություն անել, չողքոր-
թել, խարել, ակտում են և՛ մանրից, և՛ մեծ
գումարով, բայց մշտապես ծածուկ և թափով,
իրենց գրանց գնել ուրիշի բարիքը։ Նրանց ի՞նչ
փույթ, վոր նա ուրիշի յե։ Զե վոր հենց իրեն-
ցից խել են այն ամենը, ինչ նրանք ունեցել են;
իրենց կամքը և իրենց միտքը, և լ ինչպէս ս
նրանք դատեն այն մասին, թե ինչն ե աղնիլ և
ինչը անաղնիվ։ Ինչպէս չուղել խարել մյուսին
իր անձնական շահի համար։

Բուրժուազիան մշակել ե իր որենքը՝ «Մարդու
մարդուն» գայլ։

Բարդակի նշանավոր յերկերից մեկի՝ «Հայր Գո-
րիոյի» հերոս Վորտրենը բուրժուական այս որիքն ար-
տահայտել և բավական ցայտուն կերպով։ Նա ասում է.

«Տղամարդկանց և կանանց վրա նայեցեք մի-
այն իբրև փոստի ձիերի, վորոնց դուք գեն եք
շպրտում, վոր տատկեն ամեն մի փողոցում, և
դուք կհասնեք ցանկության դադարթը։

Այս և կապիտալիզմի խակական բարոյականությու-
նը։ Վորքան ել բուրժուազիան խնամքով այս թագ-
ցընի «սեր զեսի մերձավորը» նյութի վերաբերյալ զա-

նազան բարեպաշտ խոսակցություններով և այլն, —
այս բանը թմրգնել չէ կարելի:

Մենք ստեղծում ենք մեր բարոյականությունը,
սոցիալիստական հասարակության բարոյականու-
թյունը: Սոցիալիստական հասարակության հիմնա-
կան որենքը շարադրել և ընկեր Ստալինը հետեւյալ
նշանափոր խոսքերով.

«...աշխարհի բոլոր թանգարժեք կապիտալ-
ներից ամենաթանգարժեքն ու ամենավճռական
կապիտալը մարդիկ են, կաղըրերը»:

Հողատարությունը մարդու վերաբերյալ, ուշա-
դրությունը գեղի մարդը դրված են կոմունիստական
կուսակցության և խորհրդային կառավարության աշ-
խատանքի կենտրոնում: Սա նոր, սոցիալիստական
հասարակության բարոյականության եյտությունն է:
Ահա թե ինչու մեր առաջարկած ծրագրի նախադիմը
սովորեցնում ե յերիտասարդությանը դաստիարակե-
լու իրենց դեպի աշխատավոր մարդիկ ուշադիր վերա-
բերմունք ցույց տալու վագով:

Բայց դոյտությունի ունի՝ արդյոք կոմունիստական
բարոյականություն: Հաճախ բանն այնպես մն պատ-
կերացնում, վոր մենք մեր բարոյականությունը չու-
նենք, և շատ հաճախ բուրժուազիան մեզ մեղադրում
ե այն բանի համար, վոր մենք, կոմունիստներս, բա-
ցասում ենք ամեն մի բարոյականություն: Բայց սա
միանդամայն ախալ ե: Մենք բացասում ենք միայն
կեղծ շահագործողական բարոյականությունը: Մենք
ունենք մեր, կոմունիստական բարոյականությունը:

Ի՞նչ ե կոմունիստական բարոյականությունը: Մը
վերաբերյալ կա կենիք հետեւյալ, միանդամայն պարզ
ցուցումը.

«... մեր բարոյականությունն ամբողջովին
յենթակա յե պրոլետարիատի դասակարգային
պայքարի շահերին: Մեր բարոյականությունը
յելակետ ունի պրոլետարիատի դասակարգային
պայքարի շահերը...»

Յեվ մենք մեր կոմունիստական բարոյակա-
նությունը յենթարկում ենք այս խնդրին: Մենք
ասում ենք. բարոյականությունն այն ե, ինչ
ծառայում ե հին շահագործողական հասարա-
կության խորությունն և բոլոր աշխատավորնե-
րին կոմունիստների նոր հասարակություն
ստեղծող պրոլետարիատի շուրջը համախմբե-
լուն...

Կոմունիստական բարոյականության հիմքում
դրված ե պայքարը կոմունիզմի ամբացման ու
ավարտման համար» (XXX հ., եջ 410, 411,
413):

Վորոշ ընկերներ կոմունիստական բարոյականու-
թյունը պատկերացնում են իրեւ զանազան կանոնների
հավաքածու, համարյա թե մի հրահանգ, վոր պետք
ե նախատեսի մեր յերիտասարդության ամբողջ վար-
մունքը: Սա ճիշտ չե, սիսալ ե:

Առհասարակ հարկավոր ե նկատել, վոր չե կարելի
նոր, կոմունիստական մարդու գեմքի ուրվագծմանը
մտնենալ յենելով ինչպո՞ր ստանդարտ, վերացական

նորմաներից։ Մեզ մոտ չառ խոսակցություն եւ յեղել
նոր մարդու տիպի ու բնակուրության մասին, ընդ-
վորում գտնվում են մարդիկ, վորոնք գեղարվեստա-
կան գրականության մեջ եւ ձգում են նոր մարդուն
սպառկերել իրքեւ փայտի վոտների վրա կանգնած ինչ-
վոր անձի, վորն ապրում է համարյա թե հասուկ
մշակված հրահանդներով, վորի մոտ ամեն ինչ կա-
տարվում ե պլանով։ Ահա լասիկ ստացվում ե այն,
վոր բոլոր «կոմունի խառական առաքինություններն»
առկա յեն և այնուամենայնիվ դուքս ե գալիս վոչ թե
կենդանի մարդ, այլ ինչ-վոր «մարդանման բան»։

Ընկեր Ստալինը մեկից ավելի անդամ նախադպու-
շացրել ե մեղ բուրժուական գաղափարախոսների վոր-
ձերից՝ սոցիալիզմը կերպարաններու իրքեւ ինչ-վոր զո-
րանոց, վորտեղ բոլոր մարդիկ ամբողջովին միատե-
սակ են մտածում, միատեսակ կոստյում են հագնում,
միենույն ճաշակն ունեն և այլն։ Ընկհափառակը՝
սոցիալիզմ նշանակում ե մարդկանց անհատականու-
թյան մեծագույն ծաղկում, վորտեղ ամեն մեկը կա-
րող ե ծափակել իր ընդունակություններն ու տա-
դանդը։

Մեր ծրագիրը համարձակություն ունի հայտարա-
րելու, վոր Լենինյան կոմյերխոմիությունը յերիտա-
սարդ սերնդի մեջ դաստիարակում ե կոմունխառական
բարոյականություն, վորը թույլ ե տալիս մեր մարդ-
կանց դառնալու կոմունիստական հասարակությանն
արժանի մարդիկ։ Կոմյերիտամիությունը դաստիարա-
կում ե ստալինյան բնակորությամբ մարդիկ։ Յերբ

խոսում ես մեր յերիտասարդության հետ և հարցնում
ես, թե նա ամենից ավելի ինչ հատկություններ կուղեր
ունենալ, յերիտասարդ սերնդի մեր լավագույն ներկա-
յացուցիչներից շատերը պատասխանում են։ «Մենք
ուղում ենք ունենալ ստալինյան բնակորություն»։

Ի՞նչ ե ստալինյան բնակորությունը։ Յես կար-
ծում եմ, վոր ամենից ավելի լավ ե սրան սպասուիսա-
նել հենց ընկեր Ստալինի խոսքերով՝ ասված ի պա-
տասխան իր ծննդյան 50-ամյակի առթիվ կուսակցու-
թյան, բանվոր դաստիարակի և բոլոր աշխատավորների
վողջույնների։ Ահա այս նշանակոր խոսքերը, վորոնց
մեջ վառ կերպով արտահայտված ե ստալինյան բնա-
վորություններ։

«Կարող եք չտարակուսել, ընկերներ, վոր
յես պատրաստ եմ առաջիկայում ել նվիրել բան-
վոր դաստիարակի գործին, պրոլետարական հե-
ղափոխության և համաշխարհային կոմունիզմի
գործին իմ բոլոր ուժերը, իմ բոլոր ընդունա-
կությունները և, յեթե կարիք լինի, իմ ամբողջ
արյունը՝ կաթիլ առ կաթիլ»։

Անսահման նվիրվածությունը բանվոր դաստիարակի
գործին, յերկաթյա համառությունն ու աննկուն կա-
յունությունը պայքարում—բնակորության այս ստա-
լինյան գծերն իդեալ են, վոր վոգեշնչում են մեր
յերիտասարդությանը։ Յեվ կոմյերիտամիության մեր
ծրագրում խոսվում ե ստալինյան բնակորությամբ
յերիտասարդ հեղափոխականների սերունդ դաստիա-
րակելու մասին, այնպիսի մարդկանց, վորոնց համար

նպատակի պարզությունը, համառությունը նպատակին հասնելու մեջ և բնալորության կայունությունը, վոր խորտակում և բոլոր և ամեն տեսակ խոչընդոտները, հիմնական գծեր են:

Բուրժուազիան մեղ մեղադրում եւ այն բանի համար, վոր մենք բարոյականություն չունենք: Կոմիտամբիության ծրագրում մենք ասում ենք, վոր մենք ստեղծում ենք մեր, կոմունիստական բարոյականությունը: Լենինյան կոմիտամբությունը կուննիլի կոմունիստական բարոյականության համար, կոմունիստական հասարակություն կառուցելու համար մարտընչողների առաջին շարքերում:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՈՐՀՈՒՄ-
ՑԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻՄԱԿՈՒՄԸ

«Պաշտպանել սեփական հայրենիքը» լոգունդը մըշտապես ուղեկցել եւ ուղեկցում եւ բոլոր բուրժուազիան կան կուսակցությունների և նրանց յերտասարդական կազմակերպությունների գործունեյությանը:

Այս լոգունդով եր մզմում 1914—1918 թ.թ. իմպերիալիստական պատերազմը, այս լոգունդով եր ցարը գեպի պատերազմ քշում ոռու ժողովրդի հռկայական մասսաներին:

Բայց այնպիսի խոսքեր, ինչպիսին են հայրենիք, ծննդավայր, բուրժուազիայի բերնին հնչում են իրեն ծաղր ժողովրդի վրա, վորովհետեւ սրանք նույնպիս կեղծ են հնչում նրա բերնին, ինչպես և աղասու-

թյան, հավասարության և յեղայրության լողուներ:

Անրի Բարոյան իր «Ստալին» դրամը միանդամայն իրավացիորեն գրում է.

«Հայրենիքի պաշտպանությունը սրբազնն է: Կան մեծ խոսքեր, վոր կապիտալիզմի խոհանոցը մատուցում եւ ամեն տեսակ սոսուսով: Բայց այս չենչակում, թե մենք չենք կարող նրանց վերադարձնել իրենց իսկական խմաստը: Հայրենիքի պաշտպանությունն ատելի յե այնտեղ, վորտեղ այն նշանակում եւ կողողուտներ, դաւթումներ, «յես տեր եմ, դու՝ ստրուկ», վորտեղ այն նշանակում եւ քայլքայում և ինքնասպանություններ, պետական ագբեսիայի առաջին փուլը: Բայց այն կյանքից ել կարեռ եւ այնտեղ, վորտեղ այն նշանակում եւ պրոդեսի փուլը, աղաստագրում ստրկությունից, խիստ անվատահություն դիշատիչ պետություններին, վորոնք միայն պատրվակ են վորոնում, միայն մի միջոց՝ հնարելու պատրվակը, վորպեսզի ճղմեն կենդանի առցիւթիզմը»:

Սերը գեպի հայրենիքն ողտագործում են բուրժուազիայի կառավարող շրջանները աշխատավորներին անզուսպ կերպով շահագործելու, իմպերիալիստական նոր պատերազմներ կազմակերպելու համար:

Իմպերիալիստական պատերազմի տարիներին բուշկերի կուսարկցությունը կողմնակից եր, վոր Ռուսաստանը պարտվի այս պատերազմուամ: Բուշկերիների

կուսակցությունը կողմնակից եր, վոր հայրենական բուրժուազիան պարտվի այս պատերազմում, վորպես-դի խմբերի ալիստական պատերազմից անցնել քաղու-քացիական պատերազմի:

Բոլշևիկների կուսակցությունը քիչ մեղադրանքներ չկրեց զանազան այսպես կոչված սոցիալիստական կուսակցությունների կողմէց, վորոնք պատերազմի առաջին խակ որից գալաճանեցին բանվոր գասակար-դի գործին, կանոննեցին իրենց բուրժուազիայի պաշտ-պահության դիրքում, բայց բոլշևիկներին մեղադրում ելին իրեւ թե հայրենիքն գալաճանելու մեջ և այլն: Բոլշևիկների կուսակցությունը Լենինի գլխավորու-թյամբ միակ կուսակցությունն եր, վոր հաղատա-րիմ եր պրոլետարական ինտերնացիոնալիզմին, միակ կուսակցությունը, վոր բանվորներին ու գյուղացինե-րին պարզաբանում եր կապիտալիստական հայրենիքի պաշտպանության լողունի ամբողջ կեղծիքը, հայ-րենիք, վորտեղ ամեն ինչ պատկանում և մի խուսք կապիտալիստների ու կալվածատերերի, միակ կու-սակցությունը, վոր աղջարաբրեց խմբերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածե-լու լողունը:

Սկսած այն ժամանակից, յերբ 1917 թ. հոկտեմ-բերին իշխանությունն անցավ պրոլետարիատի ձեռքը, բոլշևիկների կուսակցությունը բացահայտորեն աղ-դարարեց սոցիալիստական հայրենիքի պաշտպանու-թյան լողունը: Այս լողունը բանվորների ու գյու-ղացիների համար դարձավ յերկաթյա որենք ինտեր-

վենտների, սոլիտարկ-զվարդիական գեներալների դեմ պայքարելու բոլոր տարիներին:

Բոլշևիկների կուսակցությունը, Լենինն ու Ստա-լինը գիմում ելին ժողովրդին՝ կոչ անելով պաշտ-պաննել սոցիալիստական հայրենիքը:

1918 թ. փետրվարի 21-ին, այն ժոմհենտին, յերբ գերմանացիք Բրեստ-Լիտովսկի գաշնագիրն ստորա-պրելու ժամանակ Տրոցկու դավաճանական վարժուն-քի հետեանքով սկսեցին իրենց չեշտակի հարձակու-մը, Լենինը դիմեց աշխատավոր մասսաներին հետե-յալ խոռքերով. «Սոցիալիստական հայրենիքը վտան-գի մեջ է: Կեցե սոցիալիստական հայրենիքը»: Իրեն մարտակոչ են հնչում Լենինի այս նշանավոր խոռքե-րը: Լենինյան այս կազմ մեկից ամելի անդամ և հրն-չել իրեւ Խորհրդային հանրապետության աշխատա-վորների կողմից իրենց սոցիալիստական հայրենիքը հերոսաբար պաշտպանելու աղդանչան: Այս լոգունը մշտապես ամենամարտական լոգունն է յեղել նաև խորհրդային յերիտասարդության, Լենինյան կոմյե-րիտմիության համար: Լենինյան կոմյերիտմիու-թյան ամբողջ պատմությունն անխորհրդեն կապ-ված է իրենց սոցիալիստական հայրենիքի պաշտ-պանության համար աշխատավորների պայքարի հետ: Մարտավան Կարմիր դրոշի շքանշանը, վորով պար-զեատրված և կոմյերիտմիությունը, արժանավոր պարզե և քաղաքացիական պատերազմի տարիներին կոմյերիտականների ցուցաբերած հերոսության հա-մար:

Առողջութային յերիտասարդությունը, ինչպես և ամբողջ ժողովուրդը պրոլետարական Մեծ հեղափոխության հետևանքով ձեռք բերեց իր սոցիալիստական հայունիքը:

«Անցյալում մենք չունեցինք և չելինք ել կարող ունենալ հայրենիք, — առել և ընկեր Ստամենը: — Սակայն այժմ, յերբ մենք տապալել ենք կապիտալիզմը, իսկ իշխանությունը մեզ մոտ բանվորական և, — մենք հայրենիք ունենք և մենք կպաշտպանենք նրա անկախությունը» («Լենինիդմի հարցեր», ռուս. էջ 445):

Ահա թե ինչու մեր ծրագիրն ամբողջ լայնությամբ դնում և խորհրդային յերիտասարդության մեջ հայրեանիքության զգացմունքը դաստիարակելու հարցը:

Խորհրդային հայրենասիրության եյտությունն եւ անոահման սերը դեպի հայրենիքը, դեպի մեր մեծ յերկրում ապրող ժողովուրդները, նրան քշնամիների ամեն մի հարձակումից պաշտպանելու և նրա ուազմական, տնտեսական ու կուտուրական հղորությանն ամրացնելու պատրաստակամուրթյունը:

Ինչու մենք մեր յերկրի հայրենասերներն ենք: Մենք մեր յերկրի հայրենասերներն ենք այն պատճառով, վոր սա միակ յերկիրն ե, վորտեղ սոցիալիզմը հաղթել ե, վորտեղ վոչնչացված ե մարդու շահագործությունը մարդու ձեռքով, վորտեղ գործնապես իրականացված են Մարքսի, Յնդելսի, Լենինի, Ստալինի մեծ դադարակարները. վորտեղ մարմափրված են պրոլետարների ու աշխատավոր մարդկության բոլոր լա-

գագույն մտադրությունները, վոր զարեր չարունակ պայքար և մղում իր ազատազրության համար: Այս յերկրի բանվոր դաստիարակն ստեղծել և արյալիսի հզոր և մեծ կուսակցություն, վորպիսին Համամիջութենական կոմունիստական (բոլշևիների) կուսակցությունն ե, վորն իրականացրել յերկրի այս վերափոխությունը: Մեր ժողովուրդն ամբողջ աշխարհին տվել ե պրոլետարիատի ու աշխատավոր մարդկության այնպիսի առաջնորդները, վորպիսին եր մեծ Լենինը և վորպիսին հանդիսանում ընկեր Ստալինը: (Ծափակարություն):

Մենք մեր հայրենիքի պատրիոտներն ենք, քանի վոր նա ժողովուրդների մեծ բարեկամության նմուշն ե: Խորհրդային պատրիոտիզմը վոչ մի ընդհանուր բան չունի բուրժուական նացիոնալիզմի հետ: Խորհրդային պատրիոտիզմն ի մի յե համարմբում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ բնակվող 180 ազգություն: Յեթե կապիտալիստական յերկիրներում այսպես կոչված «սերգեավի հայրենիքը» լողունդը անջատում է զանազան ժողովուրդների, նրանց ճակատ-ճակատի խիելով հանուն իմպերիալիստների շահերի, ապա մեզ մոտ, ընդհակառակը, իր սոցիալիստական հայրենիքի պաշտպանության և այրո լողունդը համարմբում ու միավորում ե Խորհրդային Միության բոլոր ժողովուրդներին:

Մենք մեր յերկրի հայրենասերներն ենք, վորով հետեւ նա համայն միջազգային պրոլետարիատի հե-

նարանն ե կապիտալիստների լծի դեմ պայքարելիս :
Մեր ժբկը մեծ հայրենասեր ընկեր Ստալինը մե-
կից ավելի անդամ ե սովորեցրել մեղ սոցիալիստա-
կից հայրենիքի ամրացման մեր պայքարի ամեն մի
կան հայրենիքի ամրացման մեր պայքարի ամեն մի
քայլը շաղկապել միջազգային պրոլետարական հեղա-
քայլը շաղկապել միջազգային պրոլետարական հեղա-
քայլը միջազգային պրոլետարական հեղաքայլը գործա-
պատկանում հետեւալ նշանավոր խոսքերը .

«Մենք պետք ե առաջ զնանք այնպես, վոր
ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը, նայե-
լով մեղ, կարողանա առել. ահա նա, իմ առա-
ջակա ջոկատը, ահա նա, իմ հարվածային բրի-
գագործ ահա նա, իմ բանվորական իշխանությու-
ղագործ, ահա նա, իմ հայրենիքը ; նրանք իրենց
նը, ահա նա, իմ հայրենիքը ; նրանք իրենց
պործը՝ մեր դործը լավ են անում, պաշտպա-
նենք նրանց կապիտալիստների դեմ և բորբոքներ
համաշխարհային հեղափոխության դործը» («Լե-
նինիզմի հարցերը», ռուս. եջ 446) :

Մեր սոցիալիստական հայրենիքի պաշտպանու-
թյունը, սերը դեպի իր հայրենիքը վկան համապա-
տասխանում ե մեր ինտերնացիոնալ պարտականու-
թյուններին: Ենինը դեռևս 1918 թ. գրում եր.

«Հենց միջազգային սոցիալիզմի հետ «կա-
պերն ամրացնելու» շահերի տեսակետից պար-
ապիր ե պաշտպանել սոցիալիստական հայրե-
տապիր» (XXII հ., հայ. եջ 669):

Մեր յերկիրը համայն աշխարհի կեղեգլածների
և շահագործվող ժողովուրդների փարոսն է, հույսը:
Մեր սոցիալիստական հայրենիքի ամրացումը մեր ին-

տերնացիոնալ պարտականությունն է: Այս ե մեր պար-
տականությունը միջազգային պլոտեարիատի հան-
դեմ:

Ահա թե ինչու մեր ծրագիրն այնքան մեծ ուշա-
գրություն ե նվիրում պաշտպանությանը, Խորհր-
դացին Միության զինված ուժերի ամրացմանը: Ծրա-
գիրը, ինչպես դուք դիմուք, ամբողջ լայնությունը
կոնկրետ խնդիրներ ե դնում կոմյերիտիության ռազ-
մական աշխատանքի առարկեզում, խնդիրներ, վորոնք
վերջին հաշվով հանդում են այն բանին, վոր կոմյե-
րիտիությունը մեր յերիտասարդությունից պետք ե
դաստիարակի Բանվորա-գյուղացիական Կարմիր Բա-
նակի համար լիիզախ մարտիկներ :

Հիմնականում սրանք են, ընկերներ, կոմյերիտ-
միության կենտրոնի անոմից ձեղ առաջարկվող
Համեկցել ծրագրի նախագծի դրույթները :

ԾՐԱԳԻՐԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԲՈԼՇԵՎԻԿՑԱՆ ԶԵՒ-
ՆԱՐԿ Ե

Ընդունելով ծրագիրը, կոմյերիտականները պետք
ե խանան, թե ինչպես ե մեր բոլշևիկյան կուսակ-
ցությունը, ինչպես են Լենինն ու Ստալինը վերաբեր-
վում ծրագրին առհասարակ: Հարկավոր ե նկատ-
ումնենալ, վոր բոլշևիկները ծրագրին վերաբերվում են
միանդամայն այլ կերպ, քան Ո ինտերնացիոնալի
ոպորտունիստական կուսակցությունները, վորոնք

իրենց ուղղութանիստական եյությունը թաղցնում են
ճարպակորեն կաղմված ծրագրերով:

Հեղափոխական պայքարի պատմությունը քիչ
փաստել չի իմացել այսպէս կոչված սոցիալիստական
կուսակցությունների կողմից աշխատավոր մասնանե-
րին ամենալավիրշ կերպով խաբելու վերաբերյալ, կու-
սակցություններ, վորոնք այս խարենթյությունը թաղ-
ցըրել են «մարդու ստական» Փրաղներով դարձարված
ծրագրերով:

Վերցնենք թեկուղ II ինտերնացիոնալի քաղաքա-
կան կուսակցությունների գործունեյությունը: Մի՞թե
նա չի ներկայացնում մի տիպիկ, խորապես ուղղու-
թունիստական վերաբերմունք զեպի ծրագիրը սոսկ
երբեք մի միջոցի՝ գատարկ, գեմազողիկ խոստումնե-
րով ու լոգունդներով մասսաներին իր կողմը գրավե-
լու համար:

Մարքսն ու Ենդելսը, վորոնք քիչ ուժ չեն գործա-
դրել ուղղութանիստների դեմ պայքարելու համար,
բացառիկ ուժով մերկացըրել են ծրագրային հարցերին
ցույց տրելով վերաբերմունքի այս ուղղութանիստական
եյությունը: Ուղղութանիստների կարծիքով, հեղնա-
բար դրում եյին նրանք.

«Ծրագրից հարկավոր չե իրածարվել. միայն
նրա իրականացումը պետք ե հետաձգվի անորոշ
ժամանակով: Այն ընդունում են, բայց, իսկա-
պես, վոչ թե իրենց համար, վոչ թե նրա հա-
մար, վոր հետեւն նրան իրենց կյանքի ընթաց-
քում, այլ նրա համար միայն, վոր

այն կոտակեն զարվածներին ու թուներին:
Իսկ առաջմով «բոլոր ուժերը և ամբողջ ենքր-
իսկ պատահածին» գործադրությունն մի դատարկ բանի
դիան: Կործադրությունը են ամեն մի դատարկ բանի
և կապվածականական հասարակակարգի խղճուկ
և կապվածականական վրա, վորպեսպի թվա, թե իրու այ-
լարկատման վրա, վորպեսպի թվա, թե իրու այ-
նուամբնայի մի բան ձեռնարկվում է, և վոր-
պեսպի մի հետույն ժամանակի չվախեցնեն բուր-
գուազիային» (Մարքս և Ենդելս—Ա. Բերելն,
վ. Լիրինելիսին, վ. Բրակելին և ուսիշն..
«Մարքսի և Ենդելսի արխիվ», I (VI) հ., եջ
152):

Մարքսի և Ենդելսի խոսքերը չափազանց հրատապ
են: Նրանք այսոր եւ հեջում են այնպիսի սրությամբ,
ունչութեան հեղափոխական շարժման զարգացման արշա-
լուսին:

Ուղղութանիստները յերեք հոգ չեն տարել և չեն
տանում ծրագրի թեորիական տոկունության վերա-
տանը, վորովհետեւ նրանք, ընկեր Ստալինի արտա-
հայտությամբ, մատուցում են.

«...ամբողջական հեղափոխական թեորիայի
վոխարեն՝ հակասական թեորիական դրույթներ ու
այնպիսի թեորիաների բեկորներ, վորոնք կաըր-
վել են մասսաների կենդանի հեղափոխական
վել: Են մասսաների կարծել խախուտ դոզմաներ» («Լե-
նինիզմի հարցեր», ուռւ. եջ 8):

Ուղղութանիստները ձգտում են իրենց հակահեղա-
փոխական եյությունը թաղցնել փարթամ Փրաղնե-
փոխական եյությունը դրավում ծրա-
գով, բարձրագույն լողունէներով: Նրանց ձեռքում ծրա-

դիրն աշխատավոր մասսաների խարելության գործիք է, վորովիճետև իրականուամ նրանք չեն եւ մասածում այն իրոք կենսագործելու, նրա կատարման մասին :

Իսկ ի՞նչ ե ծրագիրը հեղափոխական ըմբռնումով և վ՞ո՞րն ե բոլցեկիների վերաբերմունքը դեպի պրոլետարական հեղափոխական պայքարի ծրագրի մշտկումը :

Քոլցեկիյան կուսակցության հյօնադիր Լենինը 1903 թ. դրած իր «Գյուղական չքավորությանը» բրոշյուրում պարզաբանուամ եր գյուղացիներին, թե ի՞նչ ե ուղում սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և ինչի համար են սոցիալ-դեմոկրատներն ուրագագում իրենց ծրագիրը : Նա զրուամ եր .

«Վորովեսի ամբողջ ժողովուրդն իմանա, թե ի՞նչ են սոցիալ-դեմոկրատները և ի՞նչ են ուղում նրանք, սոցիալ-դեմոկրատները կազմել են իրենց ծրագիրը : Ծրագիր նշանակում է այն ամենի կարճ, պարզ ու հստակ հայտարարումը, ինչի գատում է կուսակցությունը և ինչի համար նա պայքարում է» (Վ Հ., Էջ 290) :

Ահա թե ի՞նչ ե ծրագիրը : Այն ծրագիրը, վար մենք առաջարկում ենք ներկա համակումարին, այն ամենի հստակ, պարզ հայտարարումն է, ինչի համար պայքարում է Լենինյան կոմյերիտմիությունը, ի՞նչ նա պահանջում է իր աշխատանքի ընթացքում կոմյերիտականներից, վորովեսի վոչ միայն ԽՍՀՄ բոլոր ժողովուրդները, այլև ամբողջ աշխատավորությունը :

Ները, ամենից առաջ աշխատավոր յերիտասարդում թյունը, իմանան, թե կիչ նակատակներ ենք դնում մենք մեր առաջ, ինչ միջոցներով մենք պետք ե դաստիարակնենք Միության հասունացող սերնդին կոմունիդմի վոգով : Վորովեսի լենինյան կոմյերիտմիության դրոշի տակ ընթացող ամբողջ յերիտասարդում թյան համար պարզ լինի, թե նա այդ վրոշի տակ ինչ պայքար պետք է կրի և ինչպիսին պիտի լինի համեկեցի շարքերն ընդունվող ամեն վոք :

Հյանի յե, վոր բուրժուական կուսակցությունները և նրանց պատմանեկական կազմակերպություններն իրենց ծրագիրը սովորաբար բաժանուամ են միքանի մասի . մի մասը պետք ե համապատասխանի թեորիական պահանջներին .—սա, այսպես ասած՝ թեորիական ծրագիրն է . մյուս մասը պետք ե համապատասխանի առիտացիոն պահանջներին, — սա, այսպես ասած՝ մասսաների մեջ առիտացիա անելու ծրագիրն է :

Ուրիշ բան է մեր կուսակցությունը : Նա յերբեք չի ունեցել, չի ունենում և չի ունենա յերկու ծրագիր, նրա լոգունդները՝ յերբեք չեն տարբերվում կուսակցության իսկական մտադրություններից : Մեր կուսակցությունը ավել է և տալիս է միայն այնպիսի լուգունդներ, վորոնք համապատասխանուամ են իրականության :

Բնկեր Ստալինն այս մասին խոսել է բավականաչափ պարզ : Պատասխանելով իրեն տրված հարցին, թե «բանվորա-գյուղացիական կառավարությունը փաս-

տական, թե իրու ազիտացիոն լոգունդ ե», նա ասել է.
«Այսպիսի հարցադրման դեպքում դուքս ե
դալիս, վոր մեր կուսակցությունը կարող ե տալ
ներքուստ իեղծ լոգունդներ, վորոնք իրականուած
անանկ են, վորոնց չի համատում կուսացությու-
նըն ինքը, բայց վորոնց այնուամենայնիվ կու-
սակցությունը գործի յե գնում մասսաներին
խարելու համար: Այսպիս կարող են վարվել եռ
սերները, մենչեւիները, բուրժուական գեմո-
կրասները, քանի վոր խոռոչի ու զործի տարբե-
րությունը և մասսաների խարելությունն այս
մահացող կուսակցությունների հիմնական գոր-
ծիքներից մեկն ե: Բայց մեր կուսակցությունը
յերբեք և վոչ մի պայմանում չի կարող այսպիս
գնել հարցը, վորովհետեւ նա մարքսիստական
կուսակցություն ե, լենինյան կուսակցություն,
վերընթաց կուսակցություն, վորոն իր ուժը քա-
ղում ե այն բանից, վոր նրա խոռոշն ու զործը
չեն տարբերվում միմյանցից, նա չի խռարում
մասսաներին, նա մասսաներին ասում ե միայն
ճշմարտությունը և իր քաղաքականությունը
կառուցում ե վոչ թե դեմադուկիայի, այլ դաստ-
կարգային ուժերի զիտական վերլուծություն
վրա» («Լենինիզմի հարցեր» 9-րդ հրատ.,
Եջ 238):

Մեր կուսակցությունը յերեք չի խարում մասսա-
ներին և մասսաներին ասում ե միայն ճշմարտությու-
նը: Նա իր քաղաքականությունը կառուցում ե վոչ

թե դեմադուկիայի, այլ դաստկարգային ուժերի դիտա-
կան վերլուծության վրա: Դուք դիտեք, վոր մեր կո-
ւնդունիստական կուսակցության ծրագրում չկամի կետ,
վորը նա ինչպես հարկն ե չիրականացներ:

Հենց այս սկզբունքներն ել զրված են մեր ծրագրի
հիմքում: Մեր ծրագիրը հիմնված ե Մարքսի-Յնդել-
սի-Լենինի-Ստալինի ուսումնական վրա: Նրա թեորիա-
կան մասից ել բղկառմ են Միության գործնական
խնդիրները. այն բոլորը, ինչ զրված ե նրանում,
հիմնակարգված ե դաստիարակային սպայքարի վորձով,
և նրա ամեն մի կետը վոչ միայն կարող ե իրակա-
նացվել, այլև անսպայման կիրականացվի:

Ծրագրի նախագծի քննարկման պրոցեսում համա-
գույնարի նախորդյակին մի շարք առաջարկներ արվե-
ցին: Շատ կոմիյերիստականներ առաջարկեցին մի շարք
կոնկրետ գործնական հարցեր, առաջարկելով դրանք
մացնել ծրագրի մեջ: Նրանք բոլորը չե, վոր արժանի
յին ծրագրի մեջ մտցվելու, թեև նրանց մեծամաս-
նությունը գործնական արժեք ունի:

Այսուղ մենք սիետք ե առաջնորդվենք Լենինի հե-
տեւյալ ցուցումով ծրագիրը կազմելու առթիվ.

«Ծրագիրը հո հրահանգ չե. ծրագիրը պետք ե
ընդգրկի ամբողջ շարժումը, իսկ իրականում,
իհարկե, հարկ ե լինում առաջին պլանի վրա մզե-
լու շարժման մերթ մեկ կողմը, մերթ՝ մյուս»:
(II հ., Եջ 527):

Ծրագիրը, ճշդիտ և պարզ շարադրելով, թե ինչ
նոլատակներ ե հետաղողում մեր կազմակերպությու-

նը, նշելով նրա պայքարի ուղին, չի կարող նման
լինել հրահանգի, վորի մէջ ամբողջ պայքարը կարծես
կարգավորված և և առաջուց նախատեսված : Այս ժա-
մանակ ծրագիրը չեր լինի պարզ ու նույատական լուց
փաստագիր և յերիտասարդությունը չեր կարող տես-
նել նրա հիմնական մտքերը :

Հենց այս պատճառով և, վոր ձեր ուշադրության,
առաջարկվող ծրագիրը չի շոշափում մի ամբողջ շարք՝
գործնական տեսակետից թերեւս շատ մեծ ու լուրջ՝
հարցեր, այլ նաև, ինչպես պահանջում եր լենինը,
վերցնում և շարժումը ամբողջությամբ և նրա հիմնա-
կան խնդիրները :

Ահա թե ինչու կոմյերիտամիության կենտկոմը չի
առարակուսում, վոր իր առաջարկած լենինյան կոմյե-
րիտմիության ծրագիրը համագումարը կընդունի միա-
համուռ կերպով : Մենք համոզված ենք, վոր կոմյե-
րիտմիությունը կատահովի նրա լրակատար կենսա-
դուրակումը :

Մեր ծրագիրը կոմյերիտական ցեղի բացահայտո-
ւեն պարզած դրոշն և, ԽԾՀՄ աշխատավորության
ստալինյան յերիտասարդ սերնդի դրոշը, մի սերունդ,
վորին գաստիարակում և բոլցիկների մեր փառապանծ
կոմոնիստական կուսակցությունը մեծ Ստալինի
զԼիսավորությամբ : (Բուռն, յերկարատև ծափահա-
րություն) :



Թարգմ. Մ. Զաքարյան, Խմբ. Ա. Բգնումի,
Խելս. Խմբ. Ս. Խաչատրյան, սրբազրիչ Ա. Տ.-Մկրտչյան

Գլավիտի միազոր Տ-1085, հրատ. Ն 389,
պատվ. Ն 258, տիրաժ 4000, ինդեքս ՌԿ
П-84

Հանձնված և արտադրության 9/VIII 36 թ.

ստորագրված և տպագրության 3/IX 36 թ.

Գիբը 60 կ.

Հայկուսիրամի ապարան, Յերևան, Ալահվերդյան Ն 27



и възможнъ
и възможнъ

и възможнъ

и възможнъ и възможнъ

գիւց 60 Կ.

613



ФАИНБЕРГ
О ПРОГРАММЕ ВЛКСМ
Армпартизат, Ереван

ՀՀ Ազգային գրադարան



NL0191435

